# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻԹԻՒ 43 (1643) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 23, 2013
VOLUME 33, NO. 43 (1643) SATURDAY, NOVEMBER 23, 2013

Պաշտօնաթերթ
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Վարդենիս-Մարտակերտ Ճանապարհի Կառուցումը Ազգի Հայրենասիրութեան Մարտահրաւէրային Փորձաքար

*ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ*

Հայաստան Համահայկական Հիմնադրամի հեռուստամարաթոնի այս տարուայ ծրագիրը կ'առաջադրէ Վարդենիս-Մարտակերտ մայրուղիի շինարարութիւնը, որ նախապէս բացուած Գորիս-Ստեփանակերտի եւ Հիւսիս-Հարաւ ճանապարհներու շարքին պիտի ըլլայ երրորդը: Արցախի եւ Հայաստանի մատուցուած փոխադրական միջոցառումներու զարգացման, շրջաններու միջեւ հաղորդակցութեան ստեղծման եւ տնտեսական վերելքին նպաստելու կողքին, Վարդենիս-Մարտակերտ ուղին, նաեւ կոչուած է ունենալու ռազմավարական բարձր նշանակութիւն:

Հայաստան Համահայկական Հիմնադրամը, իր հիմնադրութեան առաջին օրէն իր շնորհաբեր ձեռքը երկարեց միջնադարեան յետամնաց պայմաններու տակ կքած Արցախի եւ Հայաստանի սահմանամերձ գիւղերու եւ քաղաքներու անտեսուած, յոգնաբեկ եւ յուսակորոյս ազգաբնակչութեան՝ անոր երաշխաւորելով ապահովութիւն, յոյս, կորով եւ նախաձեռնող ոգի:

Արդարեւ, Հայաստան Հիմնադրամը, իր կազմութեան առաջին օրէն նուիրուեցաւ շինարարական, կառուցողական, կրթական, առողջապահական եւ ֆիզիքական ապահովութեան առաջադրանքներու գործադրութեան: Հետեւողական աշխատանքով սկսաւ հայթայթել անոր տարրական, այլ՝ առաջնահերթ այն բոլոր պէտքերը, ինչպիսին էին թորեալ ջուրը, ելեքտրական սարքաւորումները, ջրառողման համակարգը, որոնցմէ զրկուած էր քաղաքացին:

Հայաստան Համահայկական Հիմնադրամը կառուցեց նամբաներ ու պողոտաներ՝ գիւղէ-գիւղ եւ գիւղէ-քաղաք՝ անձնական, կրթական, դարմանական, ընկերային, շինարարական, գիւղատնտեսական եւ վանականական տեղափոխութիւնները դիւրացնելու եւ աւելի մատչելի դարձնելու համար: Այդ ձեռքբերումները ասպարէզ բացին գիւղատնտեսութեան, տեղական արտադրութիւններու փոխադրութիւններուն եւ վաճառման առջեւ: Շարժման մէջ դրուեցաւ հայ գիւղացին իր ձգտումները արդարացնելու համար: Սառած կամ անգոյ առեւտրական կեանքը սկսաւ իր կազմաւորման ու զօրացման բախտորոշ գործընթացը:

Հայաստան համահայկական Հիմնադրամը նորոգեց մաշած, խլխլած կրթական հիմնարկները,

*Շար.ը էջ 5*

## Երկու Տարի Ետք Դարձեալ Հանդիպեցան Հայաստանի Եւ Ատրպէյճանի Նախագահները



*Սարգսեան եւ Ալիեւ Վիէննայի մէջ կայացած հանդիպումի ընթացքին*

*Նոյեմբեր 19-ին Վիէննայի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ երկար ժամանակ ծրագրուած հանդիպումը:*

*Մօտ երկու ժամ տեւած բանակցութիւններու աւարտին Սերժ Սարգսեան «նորմալ» գնահատեց հանդիպումը:*

*Նախագահներու այս հանդիպումը շատ կարեւոր էր այն առումով, որ շուրջ երկու տարի Ալիեւ եւ Սարգսեան չէին հանդիպած, եւ ղարաբաղեան կարգաւորման գործընթացը մտած էր փակուղի:*

*Հանդիպումէն առաջ Սերժ Սարգսեանին հեռաձայնած է Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ճոն Քէրրի: Ըստ Հայաստանի նախագահի մամուլի ծառայութեան, երկու կողմերը համաձայնած են, որ ղարաբաղեան հարցի խաղաղ լուծումը այլընտրանք չունի: Ամերիկեան կողմը մաղթած է հայկական կողմից լուծումներ գտնել:*

*Սարգսեան - Ալիեւ հանդիպումէն յետոյ Մինսկի խումբի համանախագահները հանդէս եկան յայտարարութեամբ, ուր մասնաւորապէս ըսուած է- - «Նախագահները համաձայնած են թափ հաղորդել հետագայ բանակցութիւններուն՝ ուղղուած խաղաղ կարգաւորման ձեռքբերման եւ յանձնարարած են իրենց արտաքին գործոց նախարարներուն՝ համանախագահ-*

*Շար.ը էջ 4*

## Կոչ Համայն Հայութեան



Սիրելի Հայրենակիցներ,

Յառաջիկայ Շաբաթ, Նոյեմբեր 28 ին պիտի կայանայ Հայաստանի Համահայկական Հիմնադրամի 16-րդ տարեկան հեռուստամարաթոնը՝ "Դէպի Արցախ" խօսուն նշանաբանով:

Հեռուստամարաթոնի եւ անոր զուգընթաց այլ դրամահաւաքներէն գոյացած հասոյթը պիտի ուղղուի՝ մեր ժողովուրդի համար չափազանց կարեւոր ռազմավարական նշանակութիւն ունեցող Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի շինութեան:

Արցախի հիւսիսային հատուածը Հայաստանին կապող այս զարկերակը ոչ միայն պիտի նպաստէ Արցախի անվտանգութեան ամրապնդման, այլ պիտի խթանէ՝ իրար կապուող երկու հատուածներու քաղաքներուն եւ գիւղերուն տնտեսական զարգացումն ու աճը:

Արդ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունով, կոչ կ'ուղղենք, աշխարհի չորս ծագերուն վրայ ապրող մեր հայրենակիցներուն, խանդավառութեամբ եւ առատաձեռն ոգիով մասնակցիլ դրամահաւաքի զանազան միջոցառումներուն, որպէսզի մեր միասնական ջանքերով իրականութիւն դառնայ այս կարեւորագոյն ծրագիրը:

Մենք հզօր ենք միասին:

**ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութիւն**

## Սարսափելի Թիւեր Արտագաղթի Վերաբերեալ

*Երեւանի մէջ լոյս տեսնող «Հայկական ժամանակը» թերթը կը գրէ, որ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայութեան հրապարակած «ՀՀ մարզերը եւ Երեւան քաղաքը թուերով» հերթական զեկոյցին մէջ տրուած է Հայաստանի մարզերու բնակչութեան թիւը: Ըստ հրապարակուած տուեալներուն, մարզերու բնակչութիւնը մէկ տարուայ ընթացքին նուազած է 13-17 տոկոսով:*

*Այսպէս. Արագածոտնի մարզի բնակչութիւնը այս մէկ տարուայ ընթացքին նուազած է 10 հազարով կամ 6.9 տոկոսով, Արարատինը՝ 20 հազարով, կամ 7.2 տոկոսով, Արմաւիրինը՝ 20.3 հազարով կամ 7 տոկոսով, Գեղարքունիքինը՝ 7.5 հազարով, կամ 3 տոկոսով, Լոռու մարզինը՝ 47.5 հազարով, կամ 17 տոկոսով, Կոտայքինը՝ 28 հազարով կամ 10 տոկոսով, Շիրակինը՝ 31 հազարով կամ 11 տոկոսով, Սիւնիքինը՝ 11 հազարով կամ 7.3 տոկոսով, Վայոց Ձորինը՝ 4 հազարով կամ 6.9 տոկոսով, Տաւուշինը՝ 6.5 հազարով կամ 5 տոկոսով:*

*Երեւանի բնակչութիւնը այդ ընթացքին նուազած է 61 հազարով, կամ 5.4 տոկոսով: Ընդհանուր առմամբ, Հայաստանի բնակչութիւնը ըստ ԱՎԾ-ի հրապարակած պաշտօնական այդ տեղեկատուութեան նուազած է 247 հազարով կամ 7.5 տոկոսով:*

*«Հարկ է նշել, որ սա պաշտօնական վիճակագրութիւնն է, որը Հայաստանում, մեղմ ասած, «պլպլացւում է»: Իրական թուերն աւելի սարսափելի են»,- կ'եզրակացնէ «Հայկական ժամանակը»:*

## Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարը Հրաւիրուած է Երեւան

*Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմեթ Դաւութօղլու հրաւիրուած է Հայաստան՝ մասնակցելու Դեկտեմբեր 12-ին Երեւանի մէջ կայանալիք Սեւծովեան Տնտեսական Համագործակցութեան Կազմակերպութեան անդամ երկիրներու արտաքին գործոց նախարարներու հանդիպման:*

*Թրքական հեղինակաւոր պարբերականներէն «Զաման» այս առթիւ կը գրէ որ, Անգարայի մէջ դրական կ'ընկալուին Երեւանէն ստացուած հրաւէրը: Այս առթիւ թերթը կը յիշեցնէ որ, Հոկտեմբերին, այցելելով Զուիցերիա Ահմեթ Դաւութօղլու խնդրած էր իր գործընկեր Տիտյէ Պուրկհալթըրէն՝ օգնել ղարաբաղեան հակամարտութիւնը կարգաւորելու հարցով, ինչ որ իր հերթին կը նպաստէ Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու նորմալացման:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԼԱՒՐՈՎԸ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻՆ Կ'ԱՍԻ ԱՄԷՆ ԻՆՉ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Սարգսեան-Ալիեւ հանդիպման ընդառաջ բաւական ակտիւ քաղաքական հոսանքներ են պտտւում, որոնք առնչւում են թէ տարածաշրջանին ու Արցախի հարցին, թէ նաեւ Կովկասին մերձ այլ խնդիրների: Սերժ Սարգսեանը այց կատարեց Արցախ, Իլհամ Ալիեւը մեկնեց Անքարա, Հայաստանի անվտանգութեան խորհրդի քարտուղարը մեկնեց Շուէյցարիա, որին էլ մի քանի օր առաջ դիմել է Թուրքիան եւ յորդորել միջնորդ հանդիսանալ արցախեան խնդրի եւ հայ-թրքական կարգաւորման համատեղման հարցում: Այսօր էլ արտգործնախարար Նալբանդեանը կը մեկնի Մոսկուա, որտեղ կը հանդիպի Լաւրովի հետ:*

*Էդուարդ Նալբանդեանը հաւանաբար Ալիեւի հետ Սարգսեանի հանդիպումից առաջ յստակեցնելու է հայկական կողմի դիրքորոշումը, համապատասխանեցնելով այն Մաքսային միութեան շահերին: Լաւրովը կ'ասի, թէ ինչ անել, ինչպէս անել, ումով անել: Դեռ Հայաստանի նախկին արտգործնախարար Օսկանեանի մակարդակով էր յայտարարւում, որ «Լաւրովը երեւի այն մարդն է, որը Ղարաբաղի հարցում աւելին գիտէ, քան մենք»:*

*Այնպէս որ, Լաւրովը Էդուարդ Նալբանդեանին կ'ասի, թէ որը ինչից յետոյ է:*

*Թէ ինչ են քննարկելու Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահները, պարզ չէ, սակայն Ռուսաստանին Ջօրի Բալյեանի գրուած նամակից յետոյ ԱՄՆ յայտարարեց, որ իր նոր համանախագահ Ուորլիքը փորձելու է նոր մօտեցումներով բանակցութիւնը շարժել տեղից:*

*Արցախի հակամարտութեան գօտում ստատուս-քուոն տարիներ շարունակ պահւում է Ռուսաստանի եւ Արեւմուտքի բալանսի վրայ: Երբ Ռուսաստանն է մօտ լինում Հայաստանին ու Ատրպէյճանին դրան փոփոխութիւն պարտադրելուն, Արեւմուտքն է ակտիւօրէն ընդդիմանում: Երբ մօտ է լւում Արեւմուտքը, կամ Թէկուզ փորձում, դրան ընդդիմանում է Ռուսաստանը: Սակայն այս պարզ բանաձեւը իր ներսում ունի բազմաթիւ այլ շերտեր, որտեղ գործօն են թէ Իրանը, թէ Թուրքիան:*

*Հայաստանի իշխանութիւնը փորձում է խաղալ հէնց դրա վրայ եւ պահել ստատուս-քուոն, խուսափելով որեւէ բան գիջելու ծանր պարտաւորութիւնից, որի տակից Հայաստանում երեւի թէ որեւէ իշխանութիւն դուրս գալ չի կարող: Այժմ էլ Նալբանդեանն իհարկէ Լաւրովից կ'ակնկալի, որ Ռուսաստանն օգնի խափանել «ամերիկեան կրեատիւը», ինչպէս մի ժամանակ ամերիկացիներն օգնեցին Կազանում խափանել «ռուսական կրեատիւը»:*

*Այս ամէնն իհարկէ կարելի էր Հայաստանի համար նպաստաւոր համարել, եթէ Հայաստանն էլ այդ ընթացքում ինչ որ «հայկական կրեատիւ» մտածէր, որը կը վերաբերէր պետութեան զարգացմանը՝ օգտուելով ստատուս-քուոյի պահպանութիւնից, դրա ընձեռած ռազմա-քաղաքական, հոգեբանական եւ տնտեսական հնարաւորութիւնից: Սակայն, «հայկական կրեատիւը» ընդամէնը հանգել է Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջեւ խաղալուն եւ տարիներ շարունակ մնացել այդ պարզունակ խաղի սահմանում:*

*«Հայկական կրեատիւը» բաւարարել է միայն այն բանին, որպէսզի այս ընթացքում պետութիւնը զարգացնելու փոխարէն զարգացուեն դրա մսխման մեխանիզմներն ու այդ միջոցով ձեւաւորուած անձնական բիզնեսները:*

*Այս վիճակում, Հայաստանը գնում է Սարգսեան-Ալիեւ հանդիպմանն ընդառաջ: Այդ հանդիպումից վտանգաւոր բան սպասել պէտք չէ: Չի կարող Հայաստանի համար լինել առաւել վտանգաւոր բան, քան այն իրավիճակը, որ առկայ է Հայաստանում եւ որը խորացել է տարեցտարի: Չի կարող Արցախի խնդիր ունեցող Հայաստանի համար առաւել վտանգաւոր բան լինել, քան Հայաստանի ու Արցախի ներկայիս «քաղաքական էլիտան», որը նաեւ համատեղութեան կարգով բիզնես «էլիտա» է: Չի կարող Հայաստանի համար առաւել վտանգաւոր բան լինել, քան օրինակ այն, երբ Հայաստանի քաղաքական դասն այդպէս էլ չի կարողացել հայեցակարգուած, սկզբունքային որեւէ այլընտրանքային մօտեցում առաջարկել Արցախի խնդրի լուծման հարցում, քան մշտապէս եղել են Հայաստանի իշխանութիւնների հռչակած պաշտօնական մօտեցումները:*

*Այդ իրավիճակում, արտաքին աշխարհում ոեւէ մէկն առանձնապէս իր առաջ խնդիր չի դնի յատուկ վտանգաւոր բաներ անել Հայաստանի համար: Ընդամէնը կը փորձեն օգտուել այն վտանգներից, որ հայկական «էլիտան» է ձեւաւորում Հայաստանի համար: Երբեմն Հայաստանը կը զգայ, թէ ինչպէս են այլք օգտւում այդ վտանգներից, երբեմն կը զգայ որոշ ժամանակ անց, երբեմն էլ գուցէ ընդհանրապէս չզգայ՝ արդէն անզգայութեան հետեւանքով:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# Օ՛ ՏՈՒՐԻԶՄ, Օ՛ ԲԱՐՔԵՐ

*ՄԱՐԻՆԱ ԲԱՂԴԱԳԻՒԼԵԱՆ*

*Աշխարհում այսօր դժուար գտնուի մի միջազգային կազմակերպութիւն, որին Հայաստանի Հանրապետութիւնը չի անդամակցում: Շատ մեծ գումարներ է վճարւում այդ կազմակերպութիւնների հրաւիրած միջոցառումներին, կոնֆերանսներին, լանչերին ու կանչերին մասնակցելու համար: Եւ խորհրդարանում, նախարարութիւններում ամենասուր բանավէճերը ծաւալւում են նրա շուրջ, թէ ով որ երկիր կը յաջողացնի պետութեան հաշուին մեկնել գոնէ մի քանի օրով: Բայց մենք այդպէս էլ չիմացանք, թէ ո՞րն էր այդ անդամակցութիւնների եւ այդ կազմակերպութիւնների մայր երկիր կատարած Թուիչքների օգուտը՝ երկիրն աւելի ժողովրդավա՞ր դարձաւ, իշխանութիւններն աւելի գրագէ՞տ դարձան, թէ՝ աչքները սիրուն տեսարաններ տեսնելուց աւելի էսթետիկ դարձան: Միւս կողմից, պատգամաւորների մեծամասնութեան համար հաղորդակցման հիմնական լեզուն իրենց գիւղի բարբառն է. այս մարդիկ մայրենի լեզուին չեն տիրապետում, ուր մնաց՝ կարողանան օտար լեզուներով խօսել: Հետաքրքիր է՝ ինչպէ՞ս են հաղորդակցւում օտարերկրեայ կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ, ինչպէ՞ս են փորձում կապեր հաստատել, ծրագրեր քննարկել այդ Թանկարժէք «ռանդեւուների» ժամանակ:*

*Ի վերջոյ, խորհրդարանը հազար ու մի հրաւէր կարող է ստանալ, բայց անգամ ամենահարուստ երկրների խորհրդարանական ներկայացուցիչները խիստ ընտրովի են մօտենում միջազգային հրաւէրներին՝ ելնելով զուտ պետական, տնտեսական, քաղաքական շահերից: Որեւէ մէկը կարո՞ղ է պատասխանել, թէ ինչու է ԱԺ նախագահն իր ֆաւորիտ պատուիրակութեամբ շտապել սերիալների երկիր: Գնացել են, որ ի՞նչ անեն, դրանից ի՞նչ պէտք է լինի Հայաստանին կամ ի՞նչ չպիտի լինի:*

*Իրականում, միջազգային տարատեսակ կոնֆերանսների սլացող պատուիրակութիւնն այդ հանդիպումները ծառայեցնում է զուտ անձնական շահերի. խօսքը միայն պետական սուղ միջոցների հաշուին նոր երկիր տեսնելը, այնտեղի խանութներում, լաւագոյն դէպքում՝ Թանգարաններում պտտուելը չէ, այլ նոր բիզնես ծանօթութիւններ ու կապեր ստեղծելը: Մարդիկ այնտեղ մասնաւոր բիզնեսի զարգացման հիմքեր են ստեղծում, եւ պատահական չէ, որ բոլոր պաշտօնական այցերի ու հանդիպումների մասին հասարակութիւնը կցկտուր տեղեկութիւններ է ստանում: Որովհետեւ, հասկանում էք, յարմար չէ վերադառնալ ու մեդիային պատմել սեփական բիզնեսի խթանման համար ձեռք բերուած անձնական պայմանաւորուածութիւնների մասին:*

**Պատգամաւորների մեծամասնութեան համար հաղորդակցման հիմնական լեզուն իրենց գիւղի բարբառն է. այս մարդիկ մայրենի լեզուին չեն տիրապետում, ուր մնաց՝ կարողանան օտար լեզուներով խօսել**

*Ուստի, ՎՊ վերընտրուած նախագահ Իշխան Զաքարեանն ինչ-որ ՍՊԸ-ի ֆինանսական ելքերն ու մուտքերն ուսումնասիրելու փոխարէն աւելի լաւ է հասարակութեանը զեկուցի, թէ ի՞նչ սկզբունքով են պետական միջոցները մխսւում տուրիստական ամբիցիաների վրայ եւ ո՞րն էր Հայաստանի Հանրապետութեան ու նրա քաղաքացիների օգուտը դրանից:*

*«ՀԱՅԵԼԻ»*

# ՓԱԿ ՇՂԹԱՅ

*Այս արատաւոր շղթան, որ 2012-ին հիւսել է Հանրապետականը, ո՞վ եւ ինչպէ՞ս է կտրելու:*

*Երբ ընտրութիւնների շրջանում ՀՀԿ-ն ամէն ինչ անում էր խորհրդարանում որակեալ մեծամասնութիւն կազմելու համար (որակեալ՝ անշուշտ, ոչ որակի իմաստով, այլ քուէարկութիւնների նուազագոյն շէմն ապահովագրելու), մենք բոլորս այնքան էլ լուրջ չէինք վերաբերւում այդ ջանքերին:*

*Մի տեսակ խաղաղ, առանց պայքարի, դատապարտուածի նման զիջեցինք ԱԺ ընտրութիւնների մարտադաշտը եւ Թոյլ տուեցինք, որ իշխանական Թիմն այնպիսի գերակշռող կազմ ունենայ խորհրդարանում, որ նրա դէմ այլեւս «խաղ չլինի»: Որ ինչ օրէնք ուզենան՝ անցկացնեն, երբ ուզենան՝ նիստ անեն, երբ չուզենան՝ նիստը տապալեն, ում ներկայացնի Սերժ Սարգսեանը՝ ընտրուի, ինչպիսի բիւջէ վարչապետը ներկայացնի՝ անցնի: Մտքներին դնեն՝ իրենց աշխատավարձերը 200 տոկոսով բարձրացնեն կամ գործազրկութեան նպաստը կտրեն: Կուտակային հիմնադրամ անցնի մտքներով՝ ստեղծեն: Սահմանադրական փոփոխութիւններ պէտք լինի՝ անեն:*

*Մի խօսքով՝ ամէն ինչ օրէնքով, կարգով, օրինական: Եւ սրա դէմն առնելու միակ տարբերակը ԱԺ ընտրութիւններին մատների արանքով նայելու սովորոյթից հրաժարուելն է:*

*Որ հանրութիւնը հասկանայ՝ միայն մէկ անձից՝ ՀՀ նախագահից չի կախուած այս երկրում կատարուող ամէն ինչ, այլ նաեւ օրէնսդիր մարմնից, որը լայն լիազօրութիւններ ունի եւ հսկայական լծակներ: Եւ երբ այդ լծակները գործի դնողները նորմալ մարդիկ լինեն՝ ոչ կոճակ սեղմողներ, մեր կեանքում կարող է շատ բան փոխուել: Բազում նորմալ օրէնքներ կ'ընդունուեն, իսկ աննորմալները կը յաջողուի կասեցնել:*

*Ուստի պատի տակ, խոհանոցներում նունուալու, սրան-նրան մեղադրելու, դաժան ճակատագրից բողոքելու փոխարէն պէտք է ընտրութիւնների ժամանակ աչալուրջ լինել եւ քուէները չվաճառել:*


**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Քրէական Գործ Չի Յարուցի Ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի Դէմ

Յատուկ քննչական ծառայութիւնը հրաժարուել է քրէական գործ յարուցել Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեանի գրութեան կապակցութեամբ՝ հիմնաւորելով, որ Փաշինեանի նկարագրած յանցագործութեան դէպքը բացակայում է:



Հայաստանի ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեան

Պատգամաւորի գրութիւնը վերաբերում էր Մաշտոցի պողոտայի բախումների ժամանակ ձերբակալուած Շանթ Յարութիւնեանի ու Վարդան Վարդանեանի նկատմամբ անձամբ Հայաստանի ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի կողմից բռնութեան աճազանգին. ըստ այդ գրութեան՝ Ձերբակալուածների պահման վայրում Նոյեմբերի 6-ին Փաշինեանի հետ հանդիպման ժամանակ Շանթ Յարութիւնեանը յայտնել է, որ Վլադիմիր Գասպարեանն ու ոստիկանապետի տեղակալ Յունան Պողոսեանը իրեն հարուածել են, Պողոսեանը սպառնալիքներ ու հայհոյանքներ է հնչեցրել իր հասցէին, մի քանի ոստիկաններ բռնել են իր ձեռքերը: Ազատամարտիկ Վարդան Վարդանեանն էլ Վլադիմիր Գասպարեանի կողմից բռնութեան մասին է պատմել:

ՀՔԾ-ն պաշտօնապէս պարզաբանում է, որ այդ տեղեկատուութիւնը չի հաստատուել իրենց կատարուած «ստուգողական գործողութիւնների արդիւնքում», ինչի պատճառով էլ քրէական գործի յարուցումը մերժւում է:

Ըստ ՀՔԾ-ի պարզաբանման, նյութերի նախապատրաստման ընթացքում Շանթ Յարութիւնեանը հրաժարուել է բացատրութիւն տալ, չի պատասխանել հարցերին՝ հիմնաւորելով, որ իրեն ձերբակալել են Մոսկուայի ԿԳԲ-ի պատուէրով՝ քաղաքական հաշուեյարդար իրականացնելու համար: Վարդան Վարդանեանը եւս հարցերին չի պատասխանել: Իսկ յայտնաբերուած մարմնական վնասուածքների վերաբերեալ ձերբակալուածները դատաբժշկական փորձաքննութիւնների ընթացքում, ըստ ՀՔԾ-ի, ասել են, թե դրանք ստացել են «Մաշտոցի պողոտայում քաշքշուկի ընթացքում»:

Շանթ Յարութիւնեանի նախկին պաշտպան Գարիկ Մալխասեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հաստատեց, որ Յարութիւնեանը քննչական մարմնին բացատրութիւն չի տուել, բայց չասաց, թե արդեօք նա իր նկատմամբ բռնութիւնների վերաբերեալ աճազանգել է:

## «Տիգրան Սարգսեանի Համար Լինել-Չլինելու Հարց է»,- Հրանդ Բագրատեան

Անդրադառնալով 2014 թ. բիւջէին՝ ՀԱԿ պատգամաւոր Հրանդ Բագրատեանն ասաց. «Ողորմելի բիւջէ են բերել: Ազգային ժողովը փոխանակ պահանջի եկամուտները, գնում. միանում ա կառավարութեանը: Սա յանցագործութիւն է: Բիւջէն հաստատւում է, իսկ մենք տեղական ինքնակառավարմանը փող չենք տալիս:

Ֆինանսների նախարարը ձեւեր է անում, թէ չի հասկանում: Մենք ասում ենք՝ եթէ դու գիւմրեցի ես ու աշխատում ես Երեւանում, քո աշխատավարձի 20 տոկոսը պէտք է փոխանցուի Գիւմրիի բիւջէ»:

Հրանդ Բագրատեանը հաւանական է համարում, որ 3-4 ամսից նախագահը կառավարութիւնը ցրի, թէպէտ շատ կ'ուզենայ պահպանել. «Երկիրը չգիտի, թէ ինչքան է իր տնտեսութիւնը. 2014-ին սպասւում է կատարեալ ձախողում, խնայողութիւններն իջնում են, կուտակումներն իջնում են: Տիգրան Սարգսեանի համար լինել-չլինելու հարց է, միւս տարի տնտեսական աճ են նկարելու»:

Մաքսայինին միանալու հետեւանքներից խօսելով՝ Հրանդ Բագրատեանը վստահութիւն է յայտնում. «Հաստատ յայտնուելու ենք ռուբլու գօտում: Ռազ ուժ յայտնուել ենք մաքսային գօտում, դա իր կանոններն ունի: Խնդիր է դրուելու մաքսային միութեան մէջ արուող խնայողութիւնները մնան մաքսային միութեան մէջ: Ռուսաստանը շատ յստակ հարց է դնելու՝ ոչ մի դրսի արժեթուղթ»:

Անդրադառնալով Կուտակային կենսաթոշակի մասին օրէնքին՝ Բագրատեանն ասում է. «Հարիւր անգամ ասեցի՝ եթէ պարտադիր յայտարարագիր չկայ տարեկան, կուտակային համակարգն անհնարին է: Քիչ ա մնում մարդու փազերը քցի: Արժոյթի միջազգային հիմնադրամը մի անգամ չհարցրեց՝ ուր ա ձեր բիւջէն: Ջեն դատապարտում էս կառավարութեան բացայայտ թերութիւնները»:

Նա նաեւ «յիմար» անուանեց ԿԲ նախագահին: «Էդ մարդը գիտնականութեան է աւարտել ու երբեք բանկիր չի դառնայ, էդ ինտելեկտը էնդեղ չկայ: Ինձ «յիմար» ասելուց յետոյ հրաւիրում է կենտրոնական բանկ քննարկումների:

Եթէ վիրաւորում ես, ինչո՞ւ ես հրաւիրում: Եթէ ընդդիմութիւնից մէկը վիրաւորէր պաշտօնեային, ԱԺ նախագահը անպայման կ'արձագանքէր: Ինձ «յիմար» ասողը ինքն է յիմարը»,- եզրափակեց Հրանդ Բագրատեանը:

## ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ը Հայաստանին Առաջարկում Է Քայլեր

Ժողովրդավարական հաստատութիւնների եւ մարդու իրաւունքների գրասենեակի (ԺՀՄԻԳ) կողմից պատրաստուած նախնական գնահատականը, որ հանրութեանը ներկայացուեց 2013թ. Նոյեմբերի 18-ին Երեւանում, առաջարկում է ուղիներ՝ Հայաստանում օրինաստեղծ գործընթացների հետագայ ներդաշնակեցման համար:

Նախնական գնահատականը, որը պատրաստուել է ԵԱՀԿ երեւանեան գրասենեակի առաջարկով, առանձնացնում է օրէնսդրական գործընթացները կարգաւորող իրաւական դաշտում հնարաւոր բացերի վեց հիմնական ոլորտներ եւ առաջարկում է մի շարք միջոցառումներ, որոնք կարող են բարելաւել ընթացակարգերը, ինչպիսիք են՝ օրէնքների նախագծերի վերանայման համար ժամկէտների աւելացումը (?), ճկունութիւնը, օրէնքի մշակման գործընթացում քաղաքացիական հասարակութեանը ներգրաւելու աւելի մեծ ջանքերը:

«Այս նախնական վերլուծութիւնը առաջին քայլ է դէպի Հայաստանի օրինաստեղծ համակարգի համապարփակ գնահատումը», ասաց ԵԱՀԿ երեւանեան գրասենեակի ղեկավար դեսպան Անդրէյ Սորոկինը: «Հաւատացած ենք, որ այն կարող է հանգեցնել կարեւոր բարեփոխումների, որոնք կը կատարելագործեն օրէնսդրական կարգաւորման արդիւնաւէտութիւնը եւ օգտակարութիւնը»:

Հայաստանի կառավարութեան եւ Ազգային ժողովի ներկայացուցիչները մասնակցեցին նախնական գնահատման շնորհանդէսին Երեւանում, որտեղ քննարկեցին փաստաթղթում նախանշուած օրէնսդրական ընթացակարգերի բացերը եւ դրանց անդրադառնալու ուղիները:

«ԵԱՀԿ յանձնառութիւնների համաձայն՝ թափանցիկ եւ համակողմանի օրինաստեղծ ընթացակարգը որակեալ օրէնսդրութեան բանալին է», . ասաց ԺՀՄԻԳ-ի օրէնսդրական աջակցութեան բաժնի ղեկավար Էլիս Թոմասը. «ԺՀՄԻԳ-ը պատրաստ է շարունակել աջակցութիւնը Հայաստանի իշխանութիւններին իրենց՝ օրինաստեղծ գործընթացների հզօրացման ջանքերում եւ իրենց առաջարկութեան համաձայն՝ ներկայացնելով համապարփակ գնահատականը, որը նաեւ հաշուի կ'առնի գործնական կիրառումը՝ ապահովելու նաեւ այն, որ առաջարկութիւնների առանցքում լինեն բարեփոխումների գործնական եւ իրագործելի լուծումներ»:

## Օֆշորային Սկանդալի Գործով Փորձաքննութեան Կ'ենթարկուի Վարչապետի Ստորագրութիւնը

Ինչպէս «Ազատութեանը» փոխանցեցին ոստիկանութեան լրատուական ծառայութիւնից, իրաւական օգնութիւն ցուցաբերելու միջնորդութեամբ Հայաստանի ոստիկանութիւնը դիմել էր Կիպրոսի Հանրապետութեանը եւ արդէն իսկ ստացուել են այդ երկրում գրանցուած «Վլիսպերա Հոլդինգին» ընկերութեան բաժնեմասերի փոխանցման վերաբերեալ փաստաթղթերի պատճէններում առկայ ստորագրութիւնները: Պարզելու համար, թէ արդեօք այդ ստորագրութիւնները պատկանո՞ւմ են Տիգրան Սարգսեանին, Սամուէլ Կճոյեանին, Աշոտ Սուքիասեանին կամ այլ անձանց, այս տարուայ նոյեմբերի 11-ին նշանակուել է դատաձեռագրաբանական փորձաքննութիւն:

Փորձաքննութիւնը կատարուելու է Հայաստանի Գիտութիւնների Ազգային ակադեմիայի Փորձաքննութիւնների ազգային բիւրո ՊՈԱԿ փորձագէտների կողմից:

Յիշեցնենք, «Հետք» պարբերականը լրագրողական հետաքննութեան արդիւնքում պարզել էր, որ Կիպրոսում գրանցուած օֆշորային կազմակերպութեան բաժնետէրեր են Հայաստանի վարչապետը, Արարատեան թեմի փոխանորդ արքեպիսկոպոս Կճոյեանը եւ գործարար Աշոտ Սուքիասեանը: «Հետքը» նաեւ ծաւալուն յօդուած էր հրապարակել ներկայացնելով, թէ ինչպէս է այս անձանց պատկանող օֆշորային ընկերութիւնը իւրացրել է գործարար, «Հայաստան» հանրախանութի նախկին սեփականատէր Փայլակ Հայրապետեանի ունեցուածքը:

Վարչապետ Տիգրան Սարգսեանը պնդում է, թէ ինքը որեւէ կապ չունի այդ օֆշորային ընկերութեան հետ, եւ այս տարուայ ամռանը տեղեկացրել էր Գլխաւոր դատախազութեանը, թէ ինքը Կիպրոսում կամ որեւէ այլ օֆշորում կազմակերպութիւն չի գրանցել:

## Ազատամարտիկներն Ու Կուսակցութիւնները Երկրի Ապագայի Հետ Կապուած Հարցերը Քննարկեցին Դռնփակ

Նոյեմբեր 20-ին ազատամարտիկների եւ կուսակցութիւնների հերթական կլոր սեղան քաղաքական խորհրդի քննարկումը, որին հրաւիրուած էին լուսաբանելու նաեւ լրատուամիջոցների ներկայացուցիչները՝ անցաւ «դռնփակ»: Չնայած նախապէս յայտարարուած ժամին՝ լրագրողները նշուած հասցէում էին, սակայն ներս թողնող չեղաւ: Պատճառը, ամենայն հաւանականութեամբ, կուսակցութիւնների ներկայացուցիչներն են եղել, որովհետեւ նրանցից ոմանք դեռ նախորդ հանդիպմանը դժգոհ էին, որ ներկայ են նաեւ ԶԼՄ-ները եւ լրագրողների խնդրանքին՝ որ մի քիչ բարձր խօսեն, որ հնարաւոր լինի նրանց խօսքը ձայնագրել, ասացին, թէ իրենք ձայնագրելու համար չեն խօսում: Ի դէպ այսօրուայ կլոր սեղան փակ քննարկմանը մասնակցում էին երեք կուսակցութիւններ՝ ԲՀԿ-ն, «Ժառանգութիւնը» եւ ՀԱԿ-ը:

## «Ընդդիմութեան Պայքարը Միայն Իշխանութեան Համար Է»

ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը, խօսելով կայանալիք Սարգսեան-Ալիեւ հանդիպման մասին, ասել է, որ վերստին կողմերը կ'անդրադառնան Մադրիդեան սկզբունքներին:

Անդրադառնալով Կուտակային կենսաթոշակների մասին օրէնքին ու դրա կիրառմանը՝ Գալուստ Սահակեանը յայտարարեց. «Պէտք է հերթով ընկնել տները, բացատրել մանուկ-մանչուկներին, թէ ինչ է դա: Ակցիաներին մասնակցում են մարդիկ, ովքեր չեն էլ աշխատում: 10 տարի այս հարցը քննարկուել է, ժողովրդի վախը արդարացուած չէ, որովհետեւ իշխանութիւնը պատասխանատու է իր յայտարարութեան համար, 20 տարուց մարդիկ արժանապատիւ թոշակ կ'ստանան»:

Գալուստ Սահակեանը չմոռացաւ նաեւ ընդդիմութեանը. «50 հոգի ցոյց է անում, ընդդիմութիւնը կանգնում է կողքին՝ ասում է սատարում եմ, բայց ինչին է սատարում՝ ինքն էլ չգիտի: Ընդդիմութեան պայքարը միայն իշխանութեան համար է»:

# ԼՈՒՐԵՐ

## ԼՂ Հիմնահարցը՝ Թուրք-Ամերիկեան Բանակցութիւնների Օրակարգում



Ջոն Քէրի եւ Ահմետ Դավութօղու մամլոյ ասուլիսի ժամանակ

Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների երկար սպասուած հանդիպման մեկնարկից հաշուած ժամեր առաջ ղարաբաղեան հիմնախնդիրը դարձաւ Թուրքիայի եւ Միացեալ Նահանգների արտաքին քաղաքական գերատեսչութիւնների ղեկավարների բանակցութեան հիմնական թեմաներից մէկը: Այդ մասին Վաշինգտոնում յայտարարեցին պետքարտուղար Ջոն Քէրին եւ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմետ Դավութօղուն:

«Թուրքիան շատ կարեւոր դերակատարութիւն ունի խաղում բազմաթիւ առումներով: Մենք արդէն մի քանի ամիս է՝ ինչ բանակցում ենք Կիպրոսի խնդրի շուրջ, խօսել ենք նաեւ Ղարաբաղի խնդրի մասին: Եւ կարող եմ նշել, որ առանց աւելորդ աղմուկի փորձում ենք ուղիներ որոնել, որպէսզի այս գործընթացներում ներգրաւուած մեր դեսպանները կարողանան ապահովել պրոցէսի շարունակականութիւնը»,- մի քանի ժամ շարունակուած բանակցութիւնների աւարտին նշեց պետքարտուղար Քերին՝ յաւելելով նաեւ, որ վերջին օրերին Ադրբեջանի ու Հայաստանի նախագահների հետ ուղիղ հեռախօսային բանակցութիւններ է ունեցել:

«Ես զրուցել եմ թէ նախագահ Ալիեւի եւ թէ նախագահ Սարգսեանի հետ վերջին 48, կամ գուցէ 72 ժամերին, նրանք շուտով հանդիպում են: Կոչ ենք անում առաջընթաց ապահովել այս գործընթացում, մենք էլ շարունակելու ենք ակտիւօրէն ներգրաւուած լինել դրանում»,-յայտարարեց Քէրին:

Սարգսեան-Քերի հեռախօսազրոյցն, ի դէպ, եթէ հաւատանք Հայաստանի նախագահի լրատուական ծառայութեան տարածած հաղորդագրութեանը, կայացել է Սերժ Սարգսեանի՝ Վիեննա մեկնելուց անմիջապէս առաջ:

Ղարաբաղեան հիմնախնդրի շուտափոյթ լուծման անհրաժեշտութեան մասին խօսել է նաեւ Ահմետ Դավութօղլուն՝ ընդգծելով, որ վերջին շրջանով ղարաբաղեան հիմնախնդրի շուրջ բանակցութիւնները ընթացել են ինչպէս Մինսկի խմբի ձեւաչափում, այնպէս էլ երկկողմ բանակցութիւնների միջոցով:

## Եւրասիական Միութիւնում Ռուսերէնը Կ'ունենայ Յատո՞ւկ Կարգավիճակ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգէյ Լավրովը հայ գործընկերոջ հետ համատեղ ասուլիսի ժամանակ ընդգծեց, որ ռուսական կողմին ուրախացրել է այն փաստը, որ երիտասարդ հայերի շրջանում աճել է հետաքրքրութիւնը ռուսաց լեզուի հանդէպ եւ աւելացել է ռուսական բուհեր ընդունուելու ձգտումը:

Նոյեմբերի 11-ին Հայաստանի կրթութեան նախարարն Արմէն Աշոտեանը ռուսական «Գոլոս Ռոսիի» ռադիոկայանի հետ հարցազրոյցում նոյնպէս նշել էր, որ երիտասարդների շրջանում նո՞ր վերաբերմունք է առաջացել ռուսաց լեզուի հանդէպ:

«Հայաստանն այսօր ունի բոլոր ենթակառուցուածքները ռուսերէնին կրկին շունչ հաղորդելու համար»,- յաւելել էր նախարարը:

Վերջին մէկ շաբաթուայ ընթացքում ռուսերէնն ամրապնդելու անհրաժեշտութեան մասին խօսեց նաեւ երրորդ պաշտօնեան՝ Ռուսաստանի Պետդումայի ներկայացուցիչ Լեոնիդ Սլուցկին՝ նշելով, որ Եւրասիական Միութիւնում ռուսերէնը պէտք է ունենայ, եթէ ոչ բարձր, ապա առնուազն տեխնիկական կարգավիճակ, որովհետեւ բոլոր փաստաթղթերը, տնտեսական պայմանագրերը կը լինեն ռուսերէնով: Նա հայ պատգամաւորներին օրինակ էր բերել Բելառուսն ու Ղազախստանը, որտեղ ռուսերէնն ունի պաշտօնական լեզուի կարգավիճակ:

Մասնագէտները Երեւանում արդէն մտահոգւում են Կրեմլից հնչող այս ակնարկներով. շատերը մտավախութիւն ունեն, որ կարող է կրկնուել Խորհրդային Միութեան պատմութիւնը:

«Խորհրդային տարիներին ռուսերէնի ազդեցութիւնը մեծ էր մեր լեզուի վրայ, եւ յատուկ քաղաքականութիւն էինք իրականացնում, որ մեղմէինք այդ ազդեցութիւնը, այս խնդիրն ունէինք: Պաշտօնական գրագրութեան մէջ ռուսերէնի ազդեցութիւնը շատ մեծ էր, եւ դրանով վտանգւում էր լեզուի մաքրութիւնը», - ասում է Երեւանի պետական համալսարանի Հայոց լեզուի ամբիոնի վարիչ Եուրա Աւետիսեանը:

Մասնագէտը կարծում է, որ Խորհրդային Միութեան տարիներին, չնայած ռուսերէնի խիստ կարեւորութեանը, հայերէնով աւելի լուրջ էին զբաղւում, իսկ այսօր լեզուի հետ կապուած հարցերն աւելի բարձիթողի են:

## Ինչ Կը Լինի, Եթէ «Թուրքիայի Ձայնի» հայ մասնակիցը Դուդուկի Ուղեկցութեամբ «Դլէ Յաման» Երգի

Թուրքական Star TV-ի եթերում ցուցադրուող «Թուրքիայի Ձայնը» նախագծի ընթացքում իր ելոյթով ժիւրիի հաւանութեանն արժանացած ազգութեամբ հայ Ջորջ Շեքերի՝ հայկական ինքնութիւնը չթաքցնելու մասին գրել է պոլսահայ «Ակօս» կայքը:

«Թուրքիայում հայերը յաճախ ստիպում են իրենց երեխաներին գաղտնի պահել ազգային պատկանելիութիւնը»,- գրում է յօդուածագիր Նայաթ Քարաքեոսէն՝ յաւելելով, թէ ինչ է զգացել այն պահին, երբ միլիոնաւոր հեռուստադիտողների առաջ Ջորջն ասաց. «Ես հայ եմ»:

«Թուրքիայի Ձայնն» այժմ Թուրքիայում ամենադիտուող հաղորդումներից մէկն է եւ էկրանների մօտ է հաւաքում տարբեր տարիքի եւ խմբերի միլիոնաւոր մարդկանց:

Ջորջ Շեքերն այդ մրցոյթին մասնակցող առաջին հայն է (հնարաւոր է՝ առաջ էլ հայեր մասնակցել են, սակայն չեն նշել, որ հայ են):

«Համոզուած եմ՝ էկրանների մօտ չկար մի հայ, որ նրա եւ ժիւրիի երկխօսութիւնը լսելով չյուզուեր: Յատկապէս 50-60 տարեկան հայերին, որոնք իրենց երեխաներին «Ամէն տեղ հայ լինելդ ցոյց մի՛ տուր», «հասարակական վայրում հայերէն մի՛ խօսիր» ասելով են իրենց երեխաներին մեծացրել, Ջորջը ստիպեց յուզուել: Նա «արմատներով հայ եմ» ասելով չխուսափեց պատասխանից եւ պարզապէս ասաց. «Հայ եմ»: Չնայած, որ իր այդ քայլը վիճաբանութիւնների պատճառ կը դառնար, իր կեանքի համար վտանգաւոր կը լինէր, նա առանց խօսքն այս ու այն կողմ գցելու, հանգիստ եւ սրտանց ասաց. «Հայ եմ»,- գրում է յօդուածագիրը:

Նա յիշեցնում է, որ նման դէպք էկրաններին առաջին անգամը տեղի չի ունենում: 12 տարի առաջ մէկ այլ մրցոյթի էդի անունով հայ էր մասնակցել: Հայ լինելը չթաքցնելով՝ պարբերաբար խաչակնքուող էդին խաչ կրելուց վախեցող, քրիստոնեայ լինելը թաքցնող, խաչ կրելն արգելող ծնողների երեխաների համար օրինակ եղաւ: Եւ երբ նա առաջին տեղը գրաւեց,



Երգիչ Ջորջ Շեքեր

հայերը մեծ ուրախութեամբ ընդունեցին, մտաւելով՝ արդեօք Թուրքիայում ինչ-որ բա՞ն է փոխւում:

Նոյն մրցոյթին 2003թ.-ին մասնակցեց եւ յաղթեց մէկ այլ մասնակից՝ Վիգէն Ժամկոչեանը:

«10-12 տարի անց դարձեալ մրցոյթի մի մասնակից կարողանում է տպաւորել ժիւրիին, եւ Ջորջ Շեքերին էկրանին տեսնելը յուզիչ է»,-գրում է Նայաթ Քարաքեոսէն:

Այս մասնակիցն արդէն սկսել է քննարկուել սոցիալական ցանցերում: Նրա հանդէպ երկու հիմնական մօտեցում, տեսակէտ կայ. ոմանք ասում են «հալալ լինի», որ ինքնութիւնը չթաքցրեց՝ չնայած դրանով յաղթելու հնարաւորութիւնը հաւասարեցրեց 0-ի: Միւս խումբն էլ պնդում է, որ «նա իր գործը լաւ գիտի» եւ որ այդ քայլը քարոզչութիւն էր, լոբբինգ:

Առաջիկայ շաբաթների ընթացքում Ջորջ Շէքերի մասին մի շարք մեկնաբանութիւններ ու վէճեր կը լինեն: Նա ժիւրիի՝ իրեն հաւանած անդամներից ընտրեց թուրք յայտնի երգչուհի Էբրու Գիւնդեշին:

«Արդեօք ի՞նչ տեղի կ՚ունենայ, եթէ նա միլիոնաւոր հեռուստադիտողների առջեւ հայերէն երգով հանդէս գա, բայց չերգի «Սարի գեալին» երգը. ասենք՝ դուդուկի ուղեկցութեամբ «պայթեցնի» դահլիճը «Դլէ Եաման»-ով, կամ «Սարերի հովին մեռնեմ» երգով: Եւ պարտադիր չէ, որ նա անպայմանն առաջին տեղը գրաւի: Իսկ եթէ յանկարծ «Թուրքիայի Ձայնը» Ջորջը դառնայ, ի՞նչ լաւ կը լինի...»,-գրում է նա:

## Երկու Տարի Ետք Դարձեալ Հանդիպեցան

*Շարունակուած էջ 1-էն*

ներուն հետ միասին, կատարուածի հիման վրայ շարունակել աշխատանքը՝ խաղաղ գործընթացի աշխոյժացման նպատակով: Անոնք պայմանաւորուած են կրկին հանդիպիլ յառաջիկայ ամիս»:

Երկու նախագահներու հանդիպումէն ետք Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութիւնը հրապարակե յայտարարութիւն մը, ուր ըսուած էր,- «Տեւական ընդմիջումից յետոյ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բարձր մակարդակով հանդիպումների վերսկսումը կարեւոր նշանակութիւն ունի ադրբեջանա-ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացի աշխուժացման եւ տարածաշրջանում խաղաղութեան եւ կայունութեան պահպանման տեսանկիւնից:

«Կարծում ենք, որ կայացած հանդիպումն ապացուցում է խաղաղ կարգաւորման այլընտրանքի բացակայութիւնը եւ կը ծառայի նրա անշրջելիութեան ապահովմանը:

«Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ կարգաւորման գործընթացում իրական յառաջընթացի հնարաւոր է հասնել միայն հաշուի առնելով առկայ իրողութիւնները եւ բանակցութիւնների լիարժէք ձեւաչափի՝ նրա բոլոր փուլերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անմիջական եւ ուղղակի մասնակցութեամբ, վերականգման պայմանով»:

www.massisweekly.com
updated every Friday

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ՀԵՏ

## Ձեռք կ՚երկարենք Թուրքիոյ մէջ գործող այն բոլոր կուսակցութեանց եւ կազմակերպութիւններուն, որոնք Հայկական Ցեղասպանութեան փաստը կ՚ընդունին



- Ընկեր Տիգրանեան, վերջին շրջանին Թուրքիոյ արտաքին գործոց նախարար՝ Տաւուտօղլու յաճախ կը հնչեցնէ Հայաստանի հետ յարաբերութիւններու հետ կապուած այլազան հարցեր: Ան նոյնիսկ խոստացաւ անակնկալ մատուցանել, եթէ կարենայ համոզել Ազրպէյճանը...: Ի՞նչ է ձեր տեսակէտը այս իրադարձութեանց նկատմամբ:

*- Նախ պէտք է ըսել, որ տարածաշրջանին մէջ Թուրքիոյ վարած արտաքին քաղաքականութիւնը, Տաւուտօղլուի գլխաւորութեամբ, ձախողութեան մատնուած է: Այսօր Թուրքիան լուրջ խնդիրներ ունի բարելաւելու իր յարաբերութիւնները ի՛ր իսկ դրացի երկիրներուն հետ: Ինչ կը վերաբերի Տաւուտօղլուի այսպէս կոչուած անակնկալին, ես այդտեղ ոեւէ մէկ դրական զարգացման հիմքեր չեմ տեսներ: Ըստ երեւոյթին միակ դրական բանը որ կարելի է ենթադրել այն է, թէ Թուրքիան համոզուած ըլլալու է այլեւս եւ կը փորձէ համոզել Ազրպէյճանը, որ Ղարաբաղի կարգաւորումը միայն բանակցութիւններով կրնայ լուծումի մը հանգիլ եւ ոչ՝ ռազմական միջոցներով:*

- Ձեր կարծիքով հնարաւո՞ր է որ Թուրքիան վերականգնէ հայթրքական արձանագրութիւնները:

*- Հայ-թրքական արձանագրութիւնները դեռ չծնած՝ վախճանած էին այն պահէն, երբ Թուրքիան այդ արձանագրութիւնները կապեց Ղարաբաղի հարցին հետ: Հետեւաբար, ղարաբաղեան հարցի կարգաւորման մէջ որեւէ յառաջընթաց չըլլալուն պատճառաւ, ոչ մէկ նշանակութիւն ունի այդ արձանագրութիւնները Հայաստանի Ազգային Ժողովին մէջ պահելը եւ օր առաջ պէտք է ձերբազատուիլ անկէ:*

- Վերջին շրջանին նկատելի է Հնչակեան Կուսակցութեան եւ կարգ մը թրքական կուսակցութիւններու եւ կազմակերպութիւններու միջեւ երկխօսութեան աքթիւացումը: Ինչպէ՞ս կը մեկնաբանէք այդ:

*- Հնչակեան Կուսակցութեան 20-րդ համագումարի որոշումով, մենք ձեռք կ՛երկարենք Թուրքիոյ մէջ գործող այն բոլոր կուսակցութեանց եւ կազմակերպութիւններուն, որոնք Հայկական Ցեղասպանութեան փաստը կ՛ընդունին: Մենք պատրաստ ենք այդ յառաջդէմ եւ առողջ տարրին հետ համագործակցութեան դաշտեր որոնել եւ այդ ուղղութեամբ արդէն սկսած են աշխատանքները: Թուրք հասարակութիւնը պէ՛տք է ընդունի եւ հաշտուի իր անցեալի գործած սխալներուն հետ: Մենք կը հաւատանք որ երկխօսութիւնը դրական շարժառիթ մը պիտի ըլլայ վստահութիւն ձեռք բերելու եւ հայ-թրքական յարաբերութիւնները առողջ հիմերու վրայ դնելու:*

*Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի շեմին կը գտնուինք: Ես կը հաւատամ որ Ցեղասպանութեան 100-ամեակը առիթ մը պիտի ըլլայ Թուրք հասարակութիւնը մօտեցնելու իրականութեան փաստին: Երեւակայական չէ այլեւս, որ 2015 Ապրիլ 15-ին Թուրքիոյ մէջ մեծ շուքով նշուի Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակը՝ նոյնինքն Թուրք հասարակութեան կողմէ: Ցեղասպանութեան ճանաչումն է, որ անկիւնադարձային պիտի ըլլայ հայ-թուրք պատմութեան նոր հանգրուանի մը:*

- Այս զարգացումներուն հետ կապուած Հայաստան եւ Սփիւռք համատեղ ինչպիսի՞ քայլեր կը պահեն:

*- Մենք ունինք 100-ամեակի պետական յանձնաժողովը: Այդ յանձնաժողովը կարգաւորողն է 2015-ին տեղի ունենալիք բոլոր միջոցառումներուն: Հոն կը պակսի քաղաքական հայեցողութիւնը՝ Ցեղասպանութեան ճանաչումէն առաջ ազգովին դիմագրաւելիք մարտահրաւէրներուն: Այս ուղղութեամբ այսօր բոլորս առանձին կը գործենք. Հայաստանը իր ձեւով, եկեղեցիները՝ իրենց, կուսակցութիւնները՝ նմանապէս: Անհրաժեշտ է ստեղծել Ցեղասպանութեան ճանաչման եւ անոր հետ կապուած քաղաքական, իրաւական, ինչպէս նաեւ համազգային ռազմավարութիւն մշակող կեդրոնական մարմին մը:*

***Հարցազրոյցը վարեց Ա. Ե.***

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

# «ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆ ԸՆԿ. ՎԱԶԳԷՆ ԳԱԼԹԱՔՃԵԱՆԻՆ




*Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան հրամանագիր ստորագրեց շարք մը գործիչնե րու «Երախտագիտութեան» շքանշանով պարգեւատրելու մասին: Նախագահ Սահակեանի հուչակագրին համաձայն, պարգեւատրուած 6 ամերիկահայերը մեծ դեր ունեցած են Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը պաշտպանելու եւ Հանրապետութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ աշխուժօրէն աշխատելու առումով: Նախագահ Բակօ Սահակեանի «Երախտագիտութեան» մետալին արժանացաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Վազգէն Գալթաքճեանը, որ միաժամանակ կը նախագահէ ամերիկեան Լուիզիանա նահանգի հայ-ամերիկեան խորհուրդը:*

*Նշենք, որ Գալթաքճեանի ջանքերով, 2013-ի Մայիս 30-ին, Լուիզիանա նահանգի ծերակոյտը վաւերացուց Արցախի Հանրապետութիւնը ճանչցող բանաձեւ եւ շեշտեց արցախցիներուն ազատ եւ անկախ ապրելու իրաւունքին զօրակցելու կարեւորութիւնը:*

# ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

*Շարունակուած էջ 1-էն*

կառուցեց արդիական դպրոցներ, հիմնեց գրադարաններ, մարզարաններ, հասակ առնող սերունդներուն ջամբելու համար յառաջադէմ ուսում՝ ամառնային տաք եւ ձմեռնային ցուրտ եղանակներուն դէմ բարենպաստ պայմաններու ստեղծու-մով:

Հայաստան Համահայկական Հիմնադրամը կառուցեց արդիական դարմանատուներ, հիւանդանոցներ, ծերանոցներ հայրենի սահմաններէն ներս կարենալ խնամուելու, բուժուելու, հոգատարութիւն ստանալու համար: Բացաւ ըմպելի ջուրի եւ ջրառոգման արդիական համակարգ:

Այս բոլոր իրագործումները կատարուեցան շնորհիւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի շուրջ բոլորուած միասնացած հայութեան, որ ջերմօրէն ողջունելի եւ գնահատելի է: Մինչեւ օրս, այդ բոլոր իրագործումները արժած էին աւելի քան 250 միլիոն տոլար, որուն գոյարումը արդար հպարտութիւնը կը կազմէ մեր հայրենանուէր երախտաշատ հայորդիներուն, որոնք քիչով, շատով, յանուն հայրենիքի կառուցման, ամէն տարի իրենց նիւթական ներդրումը կը կատարեն հեռուստամարաթոնային հանգանակութիւն-ներով:

Իր այս տարուան ծրագրով, Հայաստան Համահայկական Հիմնադրամը հրապարակ իջաւ հանգանակային յանդուգն մարտահրաւէրով մը, որ ոչ միայն Հայաստանի եւ Արցախի միջեւ հեռաւորութիւնները կրճատելու եւ ռազմագիտական խորը նշանակութիւն ունեցող բնոյթ ունի, նաեւ վերջին հաշուով ունի Արցախը պաշտպանելո՛ւ, Արցախին տէր կանգնելո՛ւ, Արցախը իրե՛ն պահելու անփոխարինելի վճռականութիւն եւ արժանապատուութիւն: Թշնամին ու ամբողջ աշխարհ պէտք է իմանար Արցախի ազգաբնակչութեան այս ազգային վեհ դիրքորոշումը, ինչպէս հպարտօրէն եւ բարձրաձայն պիտի յայտարարէր Արցախի փոխ Վարչապետ Արթուր Աղաբէկեան: Դրացին՝ ազերի Ալիեւը, թիկունքը քարիւղին տուած, կը յոխորտար մօտ ատենէն, իր առաւօտեան յաղթական նախաճաշը ընել Ստեփանակերտի մէջ:

Վարդենիս-Մարտակերտ մայրուղին, սկսեալ Հայաստան աշխարհի հիւսիսէն մինչեւ Արցախով մէկ, իր երեսուն միլիոն տոլար արժողութեամբ, պիտի կտրէ 70 մղոն երկարութիւն, որուն հանդիպակած 300 գիւղեր պիտի կապուին իրարու ու իրենց մատուցուած փոխադրական միջոցներու շնորհիւ պիտի ներգրաւուին ներքին եւ միջազգային շուկայական ոլորտներէն ներս:

Ինչպէս ցոյց տուինք նախապէս, Վարդենիս-Մարտակերտ մայրուղին, պիտի դառնայ Հայաստանի հիւսիսային տարածաշրջանը Արցախի հիւսիսային տարածաշրջանին կամրջող այն շինարարութիւնը, որ ոչ միայն ամենէն կարճ, արագ եւ ապահով ռազմագիտական բնոյթի ճանապարհը պիտի հանդիսանայ, նաեւ պիտի հանդիսանայ այն ուղին, որ ամբողջական պիտի դարձնէ Հայաստանի եւ Արցախի մայրուղիներու իրարու շղթայումը, նաեւ՝ Հայաստանի վրայով, կապուելու Եւրոպայի երկաթուղիներու հսկայ ցանցին, ինչ որ զարկ պիտի տայ Արցախին, դէպի Եւրոպա բացուելու աշխարհագրական հնարաւորութիւններու ստեղծման եւ զբօսաշրջիկութեան զարգացման:

Մեր ազգային բոլոր կառոյցներուն նիտի պարտքն է, միասնական եւ վճռորոշ շարքով մասնակցիլ Հայաստան Համահայկական Հիմնադրամի Վարդենիս-Մարտակերտ մայրուղիի անյետաձգելիօրէն հրատապ ծրագրի իրագործման նուիրուած հեռուստամարաթոնային հանգանակութեան արշաւին, յանուն հայրենիքի եւ ազգային արժանապատուութեան:

# ՀԱՅԱՍՏԱՆ ՊԷՏՔ Է ՉԵՂԵԱԼ ՀԱՄԱՐԷ ԹՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԷՆ ՇԱՏ ԱՌԱՋ

***ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ***
***«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր***

*Ակնկալելով քարոզչական մեծ մղձաւանջ Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին ընթացքին, թուրք պաշտօնեաները կը փորձեն վնասազերծել իրենց երկիրի արդէն իսկ արատաւորուած հեղինակութիւնը:*

*Թէեւ անոնք մտադիր չեն բանալ Հայաստանի հետ սահմանը, սակայն թուրք ղեկավարները անընդհատ հանդէս կու գան ձեւական եւ շինծու հաշտարար յայտարարութիւններով: Կեղծ արտայայտութիւններով անոնք կը պնդեն, որ իբրեւ թէ Թուրքիան կը հարթէ Հայաստանի հետ իր տարաձայնութիւնները, մինչդեռ Անգարայի թաքուն նպատակն է կասեցնել այլ երկիրներու կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը:*

*Սակայն, հաշուի առնելով Ատրպէյճանի հիւանդագին արձագանգը Հայաստանի հետ սահմանը բանալու Թուրքիոյ իւրաքանչիւր ելոյթին վերաբերեալ, թուրք պաշտօնեաները ստիպուած են նահանջելու, նախազգուշացնելով, որ Հայաստան-Թուրքիա սահմանը այնքան ժամանակ փակ պիտի մնայ, որքան «յառաջընթաց» չէ արձանագրուած Արցախի հարցին մէջ:*

*Նման թրքական հակասական յայտարարութիւններ բազմիցս տարածուած են՝ սկսեալ 2009էն, երբ Հայաստանն ու Թուրքիան Արձանագրութիւններ ստորագրեցին իրենց ընդհանուր սահմանը բանալու եւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու վերաբերեալ: Անցեալ շաբաթ, Թուրքիոյ խորհրդարանի Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի փակ նիստին, արտաքին գործոց նախարար Ահմետ Տաւութօղլուն ըսաւ, որ նախապատրաստական աշխատանքներ կը տարուին Հայաստանի հետ սահմանը բանալու համար: Առճակատուելով ընդդիմադիր պատգամաւորի մը հետ Թուրքիոյ իրական մտադրութիւններու հարցով, Տաւութօղլու շատ արագ փոխեց իր դիրքորոշումը՝ ըսելով, որ նախ Հայաստան պէտք է դուրս գայ Ղարաբաղէն՝ մինչեւ սահմանի հնարաւոր բացումը:*

*Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը նմանատիպ ելոյթ ունեցաւ նաեւ մէկ ամիս առաջ Զուիցերիա կատարած իր այցելութեան ընթացքին, երբ յայտարարեց, որ Թուրքիան «ստեղծագործական գաղափարներ» կը փնտռէ Հայաստանի հետ իր յարաբերութիւնները բարելաւելու համար: Տաւութօղլիի ստեղծագործական կամ աւելին՝ խորամանկ քայլն է՝ խուսափիլ խափանարարի պիտակէն, միաժամանակ արդարացնելով իր երկիրին կողմէ Արձանագրութիւններու վաւերացման մերժումը:*

*Տակաւին 2009ին Թուրքիոյ կառավարութիւնը կը ձեւացնէր, թէ կը փափաքի վաւերացնել Արձանագրութիւնները, որոնք կ՛ընդգրկէին տարբեր կողմնակի հարցեր, ներառեալ՝ պատմաբաններու յանձնաժողովի մը ստեղծումը Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ արխիւային փաստաթուղթերու ուսումնասիրութեան համար: Երբ Ատրպէյճան կտրականապէս դէմ արտայայտուեցաւ Հայաստանի հետ սահմանի բացման թրքական ծրագիրներուն, Թուրքիա յայտարարեց, որ ինք այլեւս չի կրնար վաւերացնել Արձանագրութիւնները, թէեւ ատիկա ակնյայտօրէն կը բխէր անոր ազգային շահերէն: Այսպիսով, չնայած իր յաւակնութիւններուն՝ իբրեւ տարածաշրջանի գերիշխան պետութիւն, Թուրքիա ենթարկուեցաւ Ատրպէյճանի վեթոյին: Նոյեմբեր 6ին Թուրքիոյ խորհրդարանին մէջ ունեցած իր ելոյթին մէջ Տաւութօղլու ոչխարի նման հլու հնազանդ կրկնեց, որ իր երկիրը Հայաստանի հետ սահմանը պիտի բանայ միայն Ատրպէյճանի արտօնութիւնը ստանալէ ետք:*

*Ակնյայտ է, որ մամուլով խայտառակուելէ ետք, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան խօսնակը հերքեց, որ Տաւութօղլու հանդէս եկած է նման յայտարարութեամբ: Այս հերքումը հաւաստի չէ, որովհետեւ թուրք պաշտօնեաներ բազմիցս կատարած են նման յայտարարութիւններ: Հայաստանի հետ սահմանի եւ երկաթուղագիծի վերաբացումի հեռանկարի աշխուժացման համար միակ հաւանական բացատրութիւնը կրնայ ըլլալ Թուրքիոյ մտադրութիւնը ճնշում գործադրելու Վրաստանի նորընտիր նախագահին վրայ, որ կը հրաժարի աջակցութիւն ցուցաբերելէ շատոնց ծրագրուած Կարս-Թիֆլիս-Պաքու երկաթուղագիծի ծրագիրին, որմով կը նախատեսուէր շրջանցել Հայաստանը:*

*Թուրքիոյ կողմէ Արձանագրութիւններու շարունակուող շահարկման վերջ դնելու համար նախագահ Սերժ Սարգսեան պէտք է իրականացնէ երեք տարի առաջ տուած իր խոստումը, երբ ան զգուշացուցած էր, որ եթէ Թուրքիա «շուտով» չվաւերացնէ Արձանագրութիւնները, ապա ան պիտի վերանայի իր դիրքորոշումը այս հարցին վերաբերեալ, այսինքն՝ Հայաստան պիտի հրաժարի այս պայմանագիրէն: Նկատի ունենալով, որ Արձանագրութիւնները տակաւին չեն վաւերացուած անոնց ստորագրումէն չորս տարի անց, ապա նախագահ Սարգսեան զանոնք պէտք է չեղեալ յայտարարէ:*

Ներկայացուած է Արեւմտահայ ու Արեւելահայ 19-րդ դարու պատմութիւնը թատրոնի ճիգերուն տակ 686 էջերու վրայ:

Հատորը ունի հետաքրքրական ծանօթութիւն տրուած 48 էջերու վրայ: Ունի լուսանկարներու բաժին, թիւով 77 լուսանկար: Հարստացած է անուանացան կով 19 էջերու մէջ: Տպաքանակը ամբողջ 500 օրինակ: Հազար ափսոս:

Հազար ափսոս որ տասնամեակի աշխատանք այս ուղղախօս գիրքը տպուած է միայն 500 օրինակով:

Երկհազարամեայ թատրոնի պատմութիւն ունեցող հայութեան մէջ այդքա՞ն նուազա՞ծ են մեր ընթերցողները:

Բազմաչխատ նուիրումի արդիւնք այս հատորին հեղինակը՝ Դոկտ. Փրոֆ. Հենրիկ Յովհաննիսեան ծնած է 1936 թուականին: Հ.Հ. Գիտութիւններու Ակադեմիայի թղթակից անդամներէն մէկն է:

Ան, 1969-էն մինչեւ թուականս հրատարակած է տասը հազար մենագրութիւն եւ մէկ հատոր թարգմանութիւն Պուշկինէն: Իր բոլոր մենագրութիւնները որպէս նիւթ կ՚ընդգրկեն հայ թատրոնը:

Ձեզի ներկայացող այս հատորը կը բաղկանայ ինը գլուխներէ ուր մեր թատերական շարժումները կը ներկայացուին բազմանկիւն եւ բազում վերլուծումներով, բաղդատական խօսքով ուր կայ խօսքը ռուսական եւ եւրոպական թատրոններու եւ անոնց աշխատանքի կերպերուն: Ուր կը գտնէք վերլուծումները

Շէյքսպիրի, Իպսընի ու բազմատասնեակ թատերագիրներու հայ թէ օտար, գործերու վերծանումին:

Հատորին մէջ պիտի հանդիպինք հայ անուանի թատերական գործիչներէն դերասան ու բեմադրիչ առանձնացած բաժինի մը ուր հեղինակը իր խօսքը ունի տասէ աւելի անուններու որոնց մէջ կան Մնակեանէն ու Աբէլեանէն մինչեւ Ազնիւ Հրաչեայի ու Սաթենիկ Ադամեանի գործունէութիւնը եւ Վահրամ Փափազեանի մուտքը՝ հայ թատրոն:

Գիրքը ունի բաժին մը հայոց գաւառական թատրոն անուան տակ ուր հեղինակը կը ներկայացնէ.-

Երեւանի, Շուշիի, Տրապիզոնի, Երզնկայի, Անիի, Ախալցխայի, Կարինի, Ալեքսանդրապոլի, Վանի եւ Կիլիկիոյ կարգ մը քաղաքներու թատերական ճիգերուն շուրջ:

Հատորը կը բացուի յառաջաբանով մը եւ ունի նաեւ ներածական խօսք, որոնց կը յաջորդեն գիրքին գլուխները:

Առաջին գլուխը՝ նիւթ «Նոր դրամայի նախաշեմին», ունի 5 ենթաբաժին:

Գլուխ Բ. «Արեւմտահայ բեմը 50-60-ական թուականներին», 9 ենթաբաժինով:

Գլուխ Գ. «Արեւելահայ բեմը 60-ական թուականներին», 9 ենթաբաժինով:

Գլուխ Դ. «Սնդուկեանական շրջան», 11 ենթաբաժինով:

Գլուխ Ե. «Տարապայման ձգտումներ Պոլսոյ բեմում», 11 ենթաբաժինով:

Գլուխ Զ. «80-ական թուականների բեմը եւ Պետրոս Ադամեան», 10 ենթաբաժինով:

Գլուխ Է. «Գաւառական թատրոն», 7 ենթաբաժիններով:

Գլուխ Ը. «Ռէալիստական թատրոն եւ կրքերի ռոմանտիկա», 7 ենթաբաժիններով, ուր կը հանդիպինք.- Դաւիթ Թրեանց, Գէորգ Տէր Դաւիթեան, Վարդուհի,

Ազնիւ Հրաչեայ, Սիրանոյշ արուեստագէտներու գրութեանց:

Գլուխ Թ. «Դարավերջ»ը 9 ենթաբաժիններով, ուր կը հանդիպինք հետեւեալ արուեստագէտներու գործունէութեան.- Յովհաննէս Աբէլեան, Շիրվանզատէ, Պօղոս Առաքելեան, Արամ Վռոյր, Գրիգոր Աւետեան, Պետրոս Ադամեան, Գէորգ Պետրոսեան, Սաթենիկ Ադամեան եւ Վահրամ Փափազեան:

Երկար է ցանկը հայ թատրոնի նուիրեալներուն Արեւմտեան թէ Արեւելեան Հայաստանի ու Կիլիկիոյ տարածքին, Արցախի եւ Սփիւռքի մէջ նաեւ:

Հեղինակը այս հատորին յառաջաբանին մէջ կ՚անդրադառնայ այս ուսումնասիրութեան գոյառումի աշխատանքին մէջ քննական աչքով մաղելու ամբողջ Արեւմտահայ եւ Արեւելահայ մամուլը, դիմելով նաեւ անհատական վկայութիւն ներու:

Հեշտ է ըսել այսքանը, բայց տարիներու աշխատանքի արդիւնք է այս գիրքը:

Գիրք, գրուած խոր վերլուծումով, կայսրինը կայսեր տալու եւ Աստծունը Աստուծոյ ուղիին հետեւելով:

Իսկ հատորին ներածականին մէջ Հենրիկ Յովհաննիսեանը կ՚ըսէ.- «Թատրոնն իր իրականացուած իմաստով ժամանակի հոգեւոր խորհրդարանն է հասարակական առաջդիմութեան ծանրաչափը»:

Յիրաւի ծանր խօսք, որ ընթացք կու տայ հատորին բոլոր էջերուն վրայ մանրազննին ներկայացնելու հայ թատրոնի 19-րդ դարու պատմութիւնը, մինչեւ շեմը 20-րդ դարին մեծն Փափազեանի մուտքով՝ Շէյքսպիրեան դրօշով:

Հեղինակը կը յամենայ միջավայրի եւ դարաշրջանի պատմութեան քննութեան վրայ: Հայոց թատրոնի պատմութիւնը այդ պայմաններուն արդիւնքն էր:

Հատորը վկայարանն է անաչառ մօտեցումի մը երբ հեղինակին խօսքը ուղղուած է մերթ Արեւմտահայ, մերթ Արեւելահայ թատրոնի պատմութեան երբ զոյգ ճակատներու վրայ գրեթէ նոյն թուականներուն ծնունդ կ՚առնեն ու կը ծաղկին հայ թատրոնին ընձիւղները, յատկապէս Պոլսոյ ու Թիֆլիսի մէջ տարծուելով Հայաստանով մէկ բազում աւաններ ալ ընդգրկելով: Ծայր կ՚առնեն դերասաններու եւ բեմադրիչներու անուններու շարաններ, ուր.- «Թատրոնի ու դերասանի արուեստի շուրջ արուող երկարաբան դատողութիւններում ամէնից աւելի գործածուում է մէկ բառ՝ ճշմարտութիւն: Հազար ու մի բան է նշանակում սա՝ պատմական ճշմարտութիւն, գաղափարի ճշմարտու թիւն, ձգտումների ճշմարտութիւն, լեզուի ճշմարտութիւն, դերասանին գնահա տելու դէպքում՝ խաղի համոզչականութիւն, խօսքի ու շարժման ներդաշնակու թիւն...»:

Ճշմարտութիւն բառէն ծնած որպիսի ընդգրկում ու ամբողջ այս ուսումնասիրութեան պատկերը ունի այս սկզբունքը որպէս ապառաժէ յենակէտ:

Հոս է Արեւմտահայ թատրոնի «Պոլսահայ դերասանութեան առաջին սերնդի պարագլուխ Ստեփան Էքշեանը (1834-1901թ.թ.), իսկ Արեւելահայ թատրոնէն

Միքայէլ Պատկանեանը:

Կը խօսուի եւ երկարօրէն Մխիթարեաններուն դերին շուրջ, որոնք սկիզբ կու տան դպրոցական թատրոնին նշելով Գաբրիէլ Այվազեանին դերը այս շարժման մէջ:

Արեւելահայ թատրոնին.- «Այս շրջանում բեմադրւում է նաեւ (50-60-ական տարիներն են) Շէյքսպիրի «Վենետիկի վաճառականը» 1865թ. Մայիսի 7-ին Ֆասուլիաճեանը խաղում է Շայլոկ, Ջամչեանը՝ Անտոնիօ: Դա Շէյքսպիրին դիմելու առաջին փորձն էր հայ բեմում:

Պիտի տեսնենք, որ այդ փորձը, Շէյքսպիրը տեսնելու փորձը պիտի բազմապատկուի բազմաթիւ հայ դերասաններու կողմէ մինչեւ որ կը յայտնուի Պետրոս Ադամեանը եւ 20-րդ դարի շեմին յանկարծ կը յայտնուի Վահրամ Փափազեանը, նոր թռիչք տալու Շէյքսպիրի գործերուն:

Երկար շրջան մը հայ թատրոնը Թիֆլիսի մէջ եւ Թիֆլիսէն հեռու մինչեւ Պոլիս, Կովկաս Սունդուկեանական շրջան է: Գէորգ Ջմշկեանը շատ պիտի յիշուի ու շատեր իր կողքին մինչեւ Սաթենիկ Ադամեան:

Ապա կը հանդիպինք Պետրոս Դուրեանի թատրերգութիւններուն, Մկրտիչ Պէշիկթաշլեանին, մէկուն «Սեւ հողեր»ուն, միւսին Զէյթունի հերոսութիւններուն: Մնակեանը միշտ ներկայ խորհրդատու է: Կայ ամբողջ փաղանգը հայ դերասաններու:

Հապա Յակոբ Պարոնեանն ու Տիգրան Չուխաճեանը: Չէ՞ որ թատրոնը սերտօրէն կապուած է երաժշտութեան, չըսե՞նք, որ թատրոնը կը համախմբէ բոլոր արուեստները:

Հոս են նաեւ Սերովբէ Պէնկլեանը, Երանուհի Գարագաշեանը, Գարեգին Ռշտունին, Թովմաս Ֆասուլաճեանը, այս բոլորին վրայ ծիրանի գօտի՝ Պետրոս Ադամեանը:

Կը մօտցուի Մարտիրոս Մնակեանը.-«Պոլսահայ բեմի վարպետների մէջ նա եղել է ամենակրթուածը, ամենապրոֆէսիոնալը եւ ամենաերկարակեացը, որ տիրապետած էր բացի մայրենիէն յունարէն, ֆրանսերէն եւ իտալերէն լեզունե րուն»:

Հատորին մէջ լայն տեղ գրաւած է եւրոպական եւ ռուսական թատրոնը թարգմանութիւններով եւ բազուն երեւելի անուններով:

Կ՚ըսուի նաեւ.- «Թատերական քննադատութեան չափանիշները բնականաբար Պոլսում չէին մշակւում, այլ արեւելահայ միջավայրում, եւ այստեղ քննադատական մտքի առաջատարը Շիրվանզադէն էր»: Թէեւ այստեղ «Մշակ»-ի խմբագիր Արծրունին ու Դերենիկ Դեմիրճեանի կողքին նաեւ Արշակ Չօպանեանը մինչեւ իսկ Գրիգոր Զօհրապ: Կը հասնինք նորարարութեան ձգտող Պօղոս Արաքսեանին:

19-րդ դարի հայ թատրոնին նուիրուած ոսկեզանձ մըն է Հենրիկ Յովհաննիսեանի մեծի նուիրաձը այս հատորով որուն «վարագոյրը» երբ կ՚իջնէ, հեղինակը կ՚ըսէ.- «Ես փորձել եմ դիտել չտեսածս իմացածիս լոյսով, համոզուած որ 20-րդ դարի առաջին կէսի հայ բեմը հիմնուած էր նախորդ դարաշրջանի փորձի վրայ...»:

Օգտաշատ, ողջունելի ուսումնասիրութիւն:

## ՆԱՄԱԿ «ՄԱՍԻՍ»ԻՆ

Յարգելի Արշակ Գազանճեան,

Հոգով ու սրտով անձամբ իմ եւ հայ գրողների գոհունակութիւնն ու յարգանքի զգացումներն եմ յղում «Մասիս» թերթին, աշխատակիցներիդ ու Ձեզ, պարոն խմբագիր, օբիեկտիւութեան ու անաչառութեան համար, արուեստն ու գրականութիւնը պատշաճ մակարդակով եւ մեծ սիրով ընթերցողին մատուցելու համար: Եւ ընդհանրապէս հայոց կեանքն ու քաղաքական զարգացումները մեծ ճշմարտութեամբ եւ համարձակութեամբ բացայայտելու, ընթերցողին կողմնորոշելու Ձեր մեծ աշխատանքի համար:

Գալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան Նախագահ՝

ԳԷՈՐԳ ՔՐԻՍՏԻՆԵԱՆ

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻն

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com
www.vaprintmedia.com

# ՀԱՅԵՐԷՆԻ ԽԼԱՑ(ՈՒ)ՈՂ ԱԿԱՆՋԸ

*ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՋԵԱՆ*

1962թ., հարաւսլաւական Բլեդ քաղաքում տեղի էր ունենում շախմատային մրցոյթ, որին մասնակցում էր նա՝ Տիգրան Պետրոսեանը, թերեւս դա էր պատճառը, որ հայկական մամուլը առանձնայատուկ ուշադրութիւն էր յատկացնում այդ իրադարձութեանը: Մրցոյթը հրճուանքի բազմաթիւ պահեր պարգեւելով շախմատասէրներին, իւրատեսակ գլխացաւանք պատճառեց լրագրողներին: Քսան մասնակիցներից մէկը՝ հարաւսլաւացի մի շախմատիստ, կրում էր մի ազգանուն, որը հայերէն, տառացիօրէն, հնչում էր այնպէս, ինչպէս իգական սեռանդամը: Հասկանալի է, որ Հայաստանի թերթերից ո՛չ մէկը (ռուսերէն թէ հայերէն), ո՛չ մի անգամ այդ ազգանունը չգրեց այնպէս, ինչպէս հնչում էր շախմատիստի մայրենի լեզուով: Տարիներ անցան, եւ մի նոր գլխացաւանք յայտնուեց հայ մամուլի համար: Այս անգամ իգականին փոխարինել էր արականը, իսկ գործունէութեան ասպարէզն էլ համեմատաբար անվնաս մարզականից տեղափոխուել էր վտանգաւոր քաղաքականը:

1993թ. Կիպրոսի հանրապետութեան նախագահ ընտրուեց քաղաքական մի գործիչ, որի ազգանուան առաջին չորս հնչիւնները աշխարհասփիւռ հայկական թերթերից ո՛չ մէկը, ո՛չ մի անգամ չգրեց այնպէս, ինչպէս գրւում եւ արտասանւում էր յունարէն: Այո՛, խօսքը Գլաֆկոս Կղերիդիսի մասին է: Հայկական ականջ ունեցողների համար «կղեր» բառը յունարէն եւ ռուսերէն հայհոյական հնչողութիւն ունի, ուստի բարեկիրթ մարդիկ, հայկական միջավայրում, աշխատում են յումպէտս չբարձրաձայնել:

Յաջորդ փորձութիւնը եկաւ Պորտուգալիայից, որտեղ կոմկուսի լեգենդար նախագահի ազգանունը գրաբարի անցեալ կատարեալով նոյնքան հայհոյական էր, որքան նախորդ երկուսը: lvaro Cunhal-ի ազգանունը հայկական մամուլը խոհեմաբար գրում էր Ալվարո Կունհալ, այսինքն՝ այնպէս, ինչպէս արտասանւում էր պորտուգալերէն, եւ ոչ թէ մեսրոպեան այբուբենի երեսունվեցերորդ տառով: Հայերէնի ականջ ունեցողները, վստահ ենք, արդէն լսեցին այդ անուան գրաբարեան արտասանութիւնը եւ տեղնուտեղը որսացին աշխարհաբար իմաստը: Օրինակները կարելի է շարունակել, բայց այսքանն էլ բաւական է՝ ապացուցելու համար, թէ ինչպէս երեք դէպքում էլ գործել է լեզուամշակութային միեւնոյն օրինաչափութիւնը. օտար բառերը նախեւառաջ լսւում են մայրենի լեզուով, այդպիսին է մեր ականջը, ուզենք թէ չուզենք:

Մենք դեռեւս մայրական որովայնից լսում ենք մեր մայրենին եւ հոգեպէս թէ մարմնապէս հասակ առնում, ձեւաւորւում նրա հնչիւնների ու մեղեդու ներքոյ: Աշխարհի միւս բոլոր լեզուները նախեւառաջ լսում ենք նրա ելեւէջներով, լսում ենք հայերէն, որքան էլ դա մեզ հեռացնի օտար լեզուի բուն բառիմաստից: Ուրիշ կերպ չենք կարող, ընդոծին այդ յատկութիւնը մեզ հետ պիտի տանենք գերեզման, եթէ անգամ մինչ այդ մի քանի օտար լեզուներ իւրացնենք: Միեւնոյն է, օտար բերանից դուրս եկող ամէն մի բառը նախեւառաջ պիտի լսենք հայերէն: Եւ սա միայն հայերէնին բնորոշ երեւոյթ չէ, ապացոյց՝ ռուսների հեգնական զարմանքը, երբ լսում են մեր Սիրուն անձնանունը, որը ռուսերէն, առաջին ձայնաւորը սղելու դէպքում, բաւական խայտառակ իմաստ է ստանում: Ֆրանսացիներին էլ զուարճացնում է մեր լաւաշը, որը նրանք լսում են որպէս la vache, ասել է թէ՝ կով: Լեհերն էլ վրդովւում են, երբ իմանում են, որ եւեւեւեւ ռուսերէն նշանակում է այլանդակ, քանի որ լեհերէն uroda-ն ճիշտ հակառակն է՝ գեղեցկութիւն: Եւ այսպէս շարունակ: Աշխարհը մայրենի լեզուով լսելու եւ ընկալելու յատկութիւնը մեր ինքնութեան, մեր մշակութակերտման անքակտելի եւ կարեւորագոյն բաղադրիչներից է: Այդպէս կարող են լսել միայն տուեալ ազգի ներկայացուցիչները եւ միայն այդ լսողութեամբ կարող են միանալ ազգերի բազմաձայնութեանը: Դրա կորուստը կարող է ծանր եւ անդառնալի հետեւանքներ ունենալ մեր նկարագրի համար՝ հասցնելով մեզ վերջնական մարգինալացման, ինչն արդէն ծայր է առել Հայաստանում: Եւ բաւական արագացուած ընթացքով:

Մօտ երեք տասնամեակ առաջ հայերէնում յայտնուեց «տեստ» բառը, որ գրւում էր Տ-ով ոչ միայն որ փոխառնուել էր ռուսերէնից, այլեւ որ այդ տարիներին մեր ականջը լսում էր հայերէն: Բառն ամրապնդուեց մեր գործածական բառարանում եւ որոշ ժամանակ անց, ենթարկուելով «անգլոամերիկերէնի» աշխարհաքաղաքական ագրեսիային, դարձաւ թեսթ եւ գիշերուզօր այդպէս հնչում է հեռուստաէկրանից: Այս խայտառակ տառադարձումի հեղինակի ականջն, անշուշտ, խլացել էր, այլապէս շրջանառութեան մէջ կը դնէր հայերէն բազմաթիւ համարժէքներից մէկը կամ կը խուսափէր Տ-ն Թ-ով փոխարինելուց, որպէսզի զարշահոտութեան զուգորդումներ չառաջացնի: Սակայն, պարզւում է, ոչ միայն նրա, այլեւ տասնեակ հազարաւորների ականջն է խլացել: Եւ ոչ միայն ականջը: Կորցրել են նաեւ հոտառութիւնը: Աշակերտ, ուսանող, ուսուցիչ, դասախօս, բանասէր, պատմաբան, գրող, լրագրող... բոլորը կրկնում են, եւ ոչ մէկի մտքով չի անցնում յիշել, թէ անգլերէն տառադարձմամբ այդ բառը հայերէնում ինչ է նշանակում:

Այս ողբալի երեւոյթի ախտորոշումն առաւել քան որոշակի է. ականջի զանգուածային, գուցէ եւ համազգային խլացում, իսկ հոտառութեան խնդիրը թողնում եմ իրենց... Այսինքն, գուցէ խտացրինք գոյները. վերջերս Վալերի Միրզոյեանը հեռուստաելոյթի ժամանակ գործածեց «տեստ»-ի հայերէն լիովին ընդունելի համարժէքը. «հարցաշար»: Գուցէ մի քիչ երկար է, բայց չի ստիպում քիթը բռնել: Անչափ միամիտ ենք, եթէ կարծում ենք, թէ բախտներս բերեց, որ Բլեդի մրցաշարը յիսուն տարի առաջ էր կամ Կիպրոսի վերոյիշեալ նախագահը վաղուց լքել է քաղաքական ասպարէզը: Եթէ հիմա տեղի ունենային այդ դէպքերը, մեր խլացած ականջներն առանց վարանելու կը գրէին այնպէս, ինչպէս չգրուեց անցած տարիներին: Դարձեա՞լ խտացրինք գոյները: Ամէն՞ին: Օրինակ՝ ամէն կերպ ջանում ենք հաճոյանալ Եւրոպային, երբեմն նոյնիսկ արւում են զիջումներ, որ, հաւանաբար, կարելի էր չանել, բայց հասարակ մի հարցում թոյլ ենք տալիս աններելի մի անտակտութիւն՝ Եւրոպայից եկած բարձրաստիճան պաշտօնեայի ազգանունը տառադարձելով այնպէս, որ տեղնուտեղը յիշում ես համառութեամբ աչքի ընկնող չորքոտանուն: Դրութիւնն առաւել ծանրանում է, երբ իմանում ենք, որ խնդրոյ առարկայ անձը կին է: Կարող ենք առանց վարանելու ասել, որ քսան-երեսուն տարի առաջ Catherine Ashton-ի ազգանունն անպայման կը գրուէր Ա-ով, բայց այսօր, խլացուած ականջները հլու-հնազանդ ենթարկուելով «անգլոամերիկերէնի» արտասանական տարբերքին՝ առանց դոյզն-ինչ մտահոգուելու, թէ դա ինչպէս կը հնչի հայերէն, գրում են Էշթոն: Բարեբախտաբար, տիկինը հայերէն չգիտի եւ հայկական թերթեր չի կարդում...

Դեռեւս XIX դարի երկրորդ կէսին Ժիւլ Վեռնը նկատել էր, որ լեզուն եւս դառնում է ոչ միայն գաղութացման, այլեւ զանգուածային տխմարացման գործիք: Նրա վէպերից մէկում կայ մի տեսարան, երբ Ժակ Պագանելը հեռաւոր Աւստրալիայի տափաստանում հանդիպում է մի տղայի, որը շատ է զարմանում՝ իմանալով, թէ աշխարհում անգլերէնից զատ ուրիշ լեզուներ գոյութիւն ունեն:1 Այսօր Հայաստանում գնալով շատանում է «աւստրալացի տղաների» թիւը, եւ այն, ինչ հասկանալի ու ներելի էր հարիւր յիսուն տարի առաջ հեռաւոր մայրցամաքի ծակուռում գոյութիւնը քարշ տուող պատանու համար, կատարելապէս աններելի ու դատապարտելի է այսօրուայ բազմամշակութային աշխարհում ապրող հայաստանեան մի հսկայական զանգուածի համար, որը հաւակնում է ներկայանալ որպէս մտաւորական: Նրանցից շատերի անգլերէնի, աւելի շուտ՝ «անգլոամերիկերէնի» իմացութիւնը (եթէ իսկապէս գիտեն) բնաւ յարգանք չի առաջացնում իմ մէջ, քանի որ իւրացրել են օտար լեզուն ոչ թէ սեփականը հարստացնելու, այլ աւելի շատ աղքատացնելու եւ քայքայելու համար: Այսինքն, այնքան լեզուն չեն իւրացրել, որքան այդ լեզուի արտասանական որոշ սկզբունքներ, որոնք գիտակցուած թէ ոչ՝ պարտադրում են հայերէնին:

Հասկանալի է, որ հայերէնում աւելի ու աւելի յաճախակի գործածուող անգլերէն բառերը տառադարձւում են այդ լեզուի արտասանութեամբ2, բայց կատարելապէս անհասկանալի եւ անընդունելի է, երբ եւրոպական գրեթէ բոլոր տեղանուններն ու անձնանունները տառադարձւում են «անգլոամերիկերէնով»: Այս «սկզբունքի» ողջ անհեթեթութիւնն ու վնասակարութիւնը երեւում է յատկապէս ռոմանական լեզուների հետ առնչուելիս, որոնցում, ի տարբերութիւն անգլերէնի, Տ-ն Թ, Պ-ն Փ, Կ-ն Ք չի դառնում: Սակայն նրանք թքած ունեն միւս բոլոր լեզուների՝ դարերի ընթացքում կայունացած սկզբունքների վրայ, քանի որ այդ մարդիկ աշխարհը տեսնում ու լսում են բացառապէս անգլերէն: Արդէն ասել ու գրել ենք, նորից պիտի ասենք. Քամյու մի՛ գրէք, այլ՝ Կամյու, Թրուայա մի՛ գրէք, այլ՝ Տրուայա, Փոլ Էլյուար մի՛ գրէք, այլ՝ Պոլ, Բեռնար Քլավել մի՛ գրէք, այլ՝ Կլավել: Կամ կը ցանկանա՞ն արդեօք մեր անգլագէտները բացատրել, թէ ֆրանսացի աշխարհահռչակ դերասանուհու անունն ինչո՞ւ է հայկական ամբողջ մամուլում «արտասանւում» անգլերէն՝ Բրիջիտ Բարդօ, երբ մեզ համար ճիշտ ձեւը Բրիժիտն է, ինչպէս ֆրանսացիք են արտասանում: Հայաստանի ռուսալեզու մամուլն էլ, ենթարկուելով այս պսիխոզին, գրում է եւեւեւեւեւեւեւ: Ինչո՞ւ պիտի մենք՝ հայերս, որ ֆրանսացիների հետ աւելի քան հազար տարուայ առնչութիւններ ունենք, այսօր «անգլոամերիկերէն» արտասանենք նրանց անունները: Ճշգրիտ տառադարձումը ոչ միայն օտար մշակոյթի առաւել հարազատ տեղափոխութիւնն է դէպի հայկականը, այլեւ լեզուի պաշտպանական համակարգի կարեւոր բաղադրիչներից մէկը:

Հայերէնում, մեսրոպեան ժամանակներից ի վեր, գործել է տառադարձման միակ ճիշտ սկզբունքը. գրել այնպէս, ինչպէս արտասանւում է բնագրում: Զհաշուած այն հատուկենտ դէպքերը, երբ տառադարձուած բառը, պահպանելով բնագրի հնչողութիւնը, աննշան փոփոխութիւններ է կրել՝ ենթարկուելով հայերէնի արտասանական առանձնայատկութիւններին: Աւերները, սակայն, տառադարձումով չեն սահմանափակւում: Այսօր Կլենտէյլում ապրող հայն առանց անգլերէնի իմացութեան կարող է ապրել, մինչդեռ Երեւանում, որտեղ պետական լեզուն, իբրեւ թէ, հայերէնն է, անգլերէն չիմացողի համար կեանքը գնալով աւելի է դժուարանում: Հետեւութիւնը պարզ է. սովորիր անգլերէն, եթէ ոչ՝ ռադդ քաշիր այստեղից, այլապէս առանց այդ լեզուի իմացութեան քո իսկ հայրենիքում կը դառնաս մարգինալ, ներողութիւն՝ հոմլես: Այսօր առանց բառարանի այլեւս անկարելի է հայկական հեռուստատեսութիւն նայել: Անգլերէն բառերի մի տարափ է թափւում էկրանից, բառեր, որոնց մեծագոյն մասի համարժէքները գոյութիւն ունեն հայերէն:

Լաւ, հեռուստացոյց կարող ես չնայել, դա նոյնիսկ օգտակար է մարմնի եւ մտքի առողջութեան համար: Բայց փողոցով չքայլել չես կարող, քայլելիս էլ համատարած տխմարութեան դրսեւորումները չնկատել չես կարող: Օրինակ՝ հնարաւո՞ր է արդեօք առողջ մտքի արտայայտութիւն համարել Զէյթունի կորած-մոլորած փողոցներից մէկի կիսանկուղային հարկում ծուարած կասկածելի մաքրութեան ճաշարանի ճակատին գրուած «Ֆաստֆուդ» ազդը: Եթէ եանկիների համար է գրել (նրանք հաստա՛տ այդտեղ չեն հասնի, բայց ենթադրենք), ապա պիտի գրուէր լատինատառ, իսկ եթէ հայերի՝ ապա ինչո՞ւ հայատառ անգլերէն եւ ինչո՞ւ, ընդհանրապէս, անգլերէն: Տխմարութեան նոյնպիսի բարձր մակարդակ է մատուցում Մոսկովեան փողոցում հաստատուած չինական ռեստորանը, որի ցուցափեղկին կարդում ենք. «ԼԱՆՉ 1500 դրամ»: Ի դէպ, որքան անցել եմ այդտեղով, օրուայ տարբեր ժամերին, ռեստորանը միշտ դատարկ է, եթէ «ՃԱՇ» գրէին, ամենայն հաւանականութեամբ, այցելուներ կ՚ունենային: Հապա տաքսիների շարժուն անգրագիտութիւնը: «Vernisaj», «Chao» կարդում ենք մեքենաների վրայ: Ուղեղը մի՛ լարէք եւ իզուր մի՛

Շար.ը էջ 19

## ՀՈԳԵԲԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
## ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆԱԽԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարդու հոգեբանական առողջութիւնը ուղղակիօրէն կապուած է անոր հետաքրքրութիւններուն եւ նախասիրութիւններուն հետ: Ֆրոյտը չեշտը դնելով «սեռական ուժ»ի տեսութեան վրայ՝ չանտեսեց եւ ընդունեց ստեղծագործական ու մտաւոր աշխուժութեան կարեւոր դերը մարդկային կեանքին վրայ: Բացատրելով մարդու ստեղծագործելու ձգտումը՝ ան նոյնիսկ մտցուց առանձին հասկացութիւն՝ «սուպլիմացիա»:

Նշեալ հասկացութեամբ Ֆրոյտը կը բացատրէր մարդկային գործունէութեան այն ձեւերը, որոնք տեսանելի կապ չունին սեռականութեան հետ, բայց կը ծագին սեռական համումէն:

Իբրեւ «սուպլիմացիա»-ի ակնյայտ ձեւեր՝ ան անդրադարձած է յատկապէս կերպարուեստին եւ գրական գործունէութեան:

«Սուպլիմացիա»-ն Ֆրոյտը կը համարէր լաւագոյն դրական եւ պաշտպանական մեքենականութիւն:

Ֆրոյտէն ետք փոխուած է շատ բան, դադրած են «սեռական ուժ»-ի՝ մարդու կեանքին վրայ ունեցած ազդեցութեան այդքան կարեւորութիւն տալը, բայց մօտեցումը ընդհանրապէս աշխոյժ գործունէութեան դերին մնացած է նոյնը:

Երբ մենք բաւարարուածութիւն կը ստանանք մեր աշխատանքէն, լաւ կը զգանք. բազմազան հետաքրքրութիւնները միտքը կը պաշտպանեն բացասական մտածումներէն եւ զգացմունքներէն: Յաճախ որեւէ գործունէութեան հանդէպ զարգացած հետաքրքրութիւնը ի վիճակի է յաղթահարելու ընկճուածութիւնը, թախիծը, գայրոյթը, անհանգստութիւնը, անսովոր մտահոգութիւնը կամ մեղքի զգացումը:

Այլ մարդոց մէջ ընդհանուր հետաքրքրութիւններու մեր փնտռտուքը հիմք է ընտանեկան եւ հասարակական կեանքի:

Բազմակողմանի հետաքրքրութիւններն ու բազմազան գործունէութիւնը կ՚օգնեն աւելի դիւրին շփուելու շրջապատին հետ: Նոր հետաքրքրութիւններն ու նախասիրութիւնները կը բարձրացնեն ինքնայարգանքը, կու տան կենսախնդութեան եւ լաւատեսութեան զգացում, ինչպէս նաեւ աւելի կը դիւրացնեն լաւ ընկեր կամ ապագայ կողակից գտնելը:

Ասոր հակառակ՝ քիչ հետաքրքրութիւններու պարագային հնարաւոր չէ դիմակալել ընկճուածութիւնը: Վատ է, որ մարդիկ հակում ունին պահպանելու հետաքրքրութիւններու նախկին նեղ շրջանակը՝ այդպիսով սահմանափակելով իրենց կեանքն ու շփումները: Միայն լայն մտահորիզոն ունենալով մարդը կրնայ մշտական կենսասիրութեան զգացում ապրիլ, երբ յագեցած են օրերը եւ բազմածրագիր գործունէութիւնը:

Բոլոր անոնց, որոնք կը փափաքին ձեռք բերել կամ զարգացնել նոր ընդունակութիւններ, պէտք է դիմակալեն բացասական միտքերը ամէն անգամ, երբ անոնք կ՚այցելեն: Կրնաք դուք ձեզի ըսել, «ես կը փորձեմ, կրնայ ըլլալ ատիկա ինծի համար իսկապէս հաճելի ըլլայ»:

Յաճախ աներեւակայելիօրէն դժուար է նոր նախասիրութիւններ ձեռք բերել ընկճուածութենէն կամ ձանձրոյթէն խուսափելու համար:

Ցաւօք մենք յաճախ կը մոռնանք՝ ինչը մեզի հաճոյք կը պատճառէ, ինչը հետաքրքրութիւններ յառաջացուցած է մեր կեանքին մէջ: Մենակեաց ու ձանձրոյթի մէջ ապրելու սովոր մարդիկ յաճախ կը գերադասեն մոռնալ իրենց համար զուարճալի ու գրաւիչ եղած ամէն ինչ:

## ՆԻՀԱՐ ՄՆԱԼՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ

Սննդաբան-մասնագէտներու հաւաստիացումով՝ այս խորհուրդներուն պէտք է հետեւին բոլորը՝ ե՛ւ նիհարնալ ուզողները, ե՛ւ անոնք, որոնց համար կարեւոր է իրենց առողջութիւնը:

1. Անհրաժեշտ է սնուիլ յաճախակի, սակայն քիչ-քիչ: Երբեք մի հրաժարիք նախաճաշէն, ճաշէն եւ ընթրիքէն: Յաճախ, բայց փոքր չափաբաժիններով սնուելով՝ պիտի նպաստէք նիւթափոխանակութեան կարգաւորման եւ պիտի խուսափիք ճարպային կուտակումներէն:

2. Սննդակարգը պէտք է բազմազան ըլլայ. անհրաժեշտ են ե՛ւ ածխաջուրերը, ե՛ւ սպիտակուցները, ե՛ւ ճարպերը:

Այնուամենայնիւ, նախապատուութիւնը տուէք միրգերուն եւ բանջարեղէնին, որոնք հարուստ են նաեւ կենսանիւթերով, բջիջանիւթով եւ հանքանիւթերով:

3. Մի՛ չարաշահէք կենդանական ճարպերը, քաղցրեղէնը, շաքարն ու աղը, ալքոհոլը:

4. Հրաժարեցէ՛ք կազով քաղցր ըմպելիքներէն:

5. Պահպանեցէ՛ք հեղուկի ընդունման օրուան չափաբաժինը՝ օրը 2 լ (ջուր, բնական թարմ հիւթեր, ապուրներ, թէյ, 1-2 բաժակ սուրճ եւ այլն):

Նիհարնալ փափաքողներուն ամենաշատ յուզող հարցերէն մէկը՝ ինչ ուտել, որպէսզի աւելորդ քիլոկրամներ «չկուտակուին»: Պէտք է յիշել. գեղեցիկ կազմուածք ունենալու համար կարեւորը միայն «ինչ ուտել»ն ու «ինչ չուտել»ը չէ:

Շատ աւելի արդիւնաւէտ եւ առողջութեան համար օգտակար է, երբ միաժամանակ նաեւ կը զբաղիք մարմնամարզութեամբ: Շատերը նիհարնալու անզուսպ ցանկութենէն դրդուած՝ օրեր շարունակ անօթի կը մնան եւ չեն պատկերացներ, որ մեծ հարուածի տակ կը դնեն իրենց առողջութիւնը: Անօթի մնալը անթոյլատրելի է: Պարզապէս փոխեցէք սննդակարգը՝ պահպանելով առողջ ապրելակերպի հիմնական կանոնները՝ չափազանց իւղոտ մսեղէնը փոխարինեցէք թռչնամիսով եւ ձկնեղէնով, կազով քաղցր ըմպելիքները՝ թարմ հիւթերով, սպիտակ հացը՝ սեւ հացատեսակներով, նաեւ հնարաւորինս շատ կերէք միրգեր եւ թարմ բանջարեղէն, օրը 1,5-2 լիթր հեղուկ խմեցէք (ցանկալի է՝ ջուր, կանաչ թէյ, թարմ մրգահիւթեր, կանաչեղէնով ապուրներ), մի չարաշահէք ալքոհոլը, աղն ու շաքարը, հրաժարեցէք չիփսերէն, պահածոներէն: Եւ զբաղեցէ՛ք մարմնամարզանքով:

Նիհարնալ ուզողները պէտք է զգոյշ ըլլան սննդականոն ընտրելու ժամանակ: Երկարատեւ կիսաքաղց վիճակը ընկճախտ է մարմնին համար, այդ պատճառով ալ սննդականոնները նախ եւ առաջ կ՚անդրադառնան ջղային համակարգին վրայ (տրամադրութեան անկումներ, ընկճուածութիւն, գերլարուածութիւն եւ այլն): Հետեւաբար, սննդականոնը պէտք է ոչ միայն նպաստէ նիհարնալուն, այլեւ՝ ապահովէ լաւ ինքնազգացողութիւն:

Եթէ մարմինը քաղցրի պահանջք ունի, կրնաք կտոր մը դառն տուրմ կամ քանի մը հատ արմաւ ուտել: Ասոնք շատ քաղցր են, միաժամանակ չգիրցնող: Կարելի չէ մարմինը խսպառ զրկել քաղցրեղէնէն, հաշուի առնելով որ անոնք կը պարունակեն ածխաջրեր, որոնք կը «սնուցանեն» առոյգութեամբ:

Պէտք չէ մոռնալ նաեւ համեմունքներուն մասին. անոնք համուհոտ կու տան կերակրատեսակներուն եւ չեն գիրցներ:

Տրամադրութիւնը բարձրացնելու համար կարեւոր է նաեւ կերակուրի մատուցումը. իսկ գեղեցիկ մատուցուած ուտեստը աւելի հեշտութեամբ կը մարսուի:

## ԱՆՈՒՇԱՀՈՏ

Անուշահոտը միշտ ալ կարեւոր դեր ունեցած է մարդու կեանքին մէջ: Հին Յունաստանի մէջ մարզիկները օգտագործած են թարմացնող բուրմունքներ, որպէսզի յաղթեն:

1930-ականներուն բժիշկները օգտագործած են բուժման նոր եղանակ՝ «արոմաթերափիա», որ կը նշանակէ բուրմունքներով բուժում: Անիկա նպաստած է ոչ միայն հիւանդի տրամադրութեան բարձրացման, այլեւ ախորժակի լաւանալուն: Ասկէ պարզ կը դառնայ, որ բուրմունքները կը թելադրեն տրամադրութիւն եւ կ՚ազդեն ինքնազգացողութեան վրայ: Սակայն միշտ չէ որ անոնք կ՚ունենան դրական ազդեցութիւն, երբեմն բուրմունքները կ՚առաջացնեն նաեւ գայրոյթ եւ գլխացաւ:

Առաջին անուշահոտերը յառաջացած են ՔԱ Մերձաւոր Արեւելքի մէջ: Եւրոպայի համար դիւրին չէ եղած նորոյթը ընդունիլ, եւ անուշահոտը, մինչեւ Եւրոպա հասնիլը, ներմուծուած է Չինաստան եւ Ճափոն:

Եգիպտոսի մէջ շպարի միջոցներ պատրաստուած են շատ աւելի կանուխ ժամանակներու: Փարաւոններու դամբարաններուն մէջ յայտնաբերուած են կաւէ սափորներ եւ փղոսկրեր՝ լեցուած մարմնի խնամքի համար նախատեսուած իւղերով: Անոնք կը բուրեն նոյնիսկ հիմա՝ 3320 տարի ետք:

Հին Յունաստանի եւ Հռոմի մէջ նոյնպէս օգտագործուած են եգիպտական անուշահոտեր՝ հաշուի չառնելով նոյնիսկ անոնց բարձր գիները:

Հետագային, ինչպէս գիտենք, անուշահոտի կեդրոնը դարձած է Ֆրանսան: Միջերկրական Ծովու բնութիւնը շատ յարմար է ծաղիկներ աճեցնելու, որոնցմէ կը պատրաստուին եթերային իւղեր անուշահոտերու համար: Անուշահոտի պատրաստման մէջ լայնօրէն կը կիրառուի վարդը:

## ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Ջոր պտուղներ (չիր)

Անօթութեան անդիմադրելի պահանջ զգալու պարագային՝ սննդագէտները խորհուրդ կու տան չիր ու չամիչ ուտել: Պէտք չէ մոռնալ, սակայն, որ 100 կրամ չոր պտուղը կը պարունակէ 220-300 ջերմուժ, որ յատկապէս նկատի պէտք է ունենան գէր եւ սննդականոնի հետեւող անձերը:

Պտուղները չորցնելու միջոցին կը կորսնցնեն իրենց պարունակած ջուրին 70%ը՝ դառնալով ջերմուժով աւելի հարուստ, քան թարմ պտուղները: Անոնք հարուստ են կլուքոզով եւ ֆրուքթոզով. ի տարբերութիւն անուշեղէնի, չեն պարունակեր ներկանիւթեր եւ արհեստական յաւելումներ: Ջոր պտուղները հարուստ են նաեւ բնաթելերով, հանքային նիւթերով, կը պարունակեն փոթասիում եւ մակնեզիում 3-6 անգամ աւելի, քան թարմ պտուղները: Ջոր պտուղները հարուստ են B խումբի կենսանիւթերով, ի տարբերութիւն թարմ պտուղներու, որոնք հարուստ են Vit C-ով: Ծիրանի եւ սալորի չիրերը ոչ միայն կը բարձրացնեն տրամադրութիւնը, այլ կը մաքրեն աղիքները:

Նպաստելով շնչառութեան բարելաւման՝ ծիրանաչիրը կ՚ամրացնէ թոքերը, պարունակած մակնեզիումի եւ ֆոսֆորի շնորհիւ կը բարելաւէ յիշողութիւնը ուղեղի եւ սրտի աշխատանքը: Քաղցկեղի բուժման զուգահեռ, խորհուրդ կը տրուի, ամէն առաւօտ ուտել, նախորդ իրիկունէ թրջուած 20 հատ չիր:

Թուզի չիրը արժէքաւոր սնունդ է, շատ օգտակար է ուտել ընկոյզի հետ: Ջոր թուզով պատրաստուած թէյը ունի քրտնեցնող եւ ջերմութիւնը իջեցնող յատկութիւն:

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

9 Նոյեմբեր, 2013ին կայացած «Մասիս» շաբաթաթերթի 33րդ Տարեդարձի շքեղ ճաշկերոյթի առթիւ մթնոլորտէն խանդավառուած եւ «Մասիս»ին նորանոր յաջողութիւններու եւ յարատեւ վերելքներու մաղթանքներով մի ոմն կը նուիրէ 200 տոլար:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

www.massispost.com

## ԴԱՍԱԴՐՈՒԼ

*Շարունակուած էջ 14-էն*

իր սեփական պատմութիւնն ունի, մերն էլ այս է, որ համառօտ դասաւանդւում է, իւրաքանչիւր հայ պիտի իմանայ իր երկրի եւ ժողովրդի պատմութիւնը, չիմացողը կը նմանի արմատից զուրկ ծառի, որ կտրուելու է իր ժողովրդից՝ ազգային արժէքներից պարպուած օտարական: Դասագրքերի կապակցութեամբ մտածւում է:

-3.-Թոշակների սակը բարձր է, շատեր պետական դպրոց են գնում չունենալու պատճառով:

-Այս վիճակում էլ դպրոցը բուդջէի բաց ունի□

Ընդմիջումներ եւ հակաճառութիւններ□

-Չէ՛, պարո՛ն, Թոշակը բարձր է, չունենք, հայրս չի աշխատում□

Շարունակում եմ ընթերցումը.

-4.-Իրաւունք տրուի, որ դպրոցում ազատօրէն քաղաքական աշխատանք տանել:

-Դպրոցը քաղաքական եւ կուսակցական վայր չէ, շեղում եւ շփոթութիւն կ՛առաջացնի ուսման կեանքում, դպրոցը ուսում եւ գիտութիւն ջամբելու սուրբ տաճար է, աշակերտը պիտի զբաղուի իր դասերով, միտքն ու հոգին զարգացնի շատ գրքեր կարդալով, գիրքը անձրեւի նման բեղնաւոր է դարձնում մարդուս էութիւնը: Քաղաքականութեամբ զբաղուելը ուսման աւարտից յետոյ:

-5.-Աշակերտութեան արտաժամեայ իրաւունք տրուի օգտուելու դպրոցի միջավայրից:

-Այդ արտօնութիւնը կախում ունի կրթական նախարարութիւնից:

Ուրախ եւ գոհ էի, որ աշակերտները առանց խանգարելու լսում էին բացատրութիւններս եւ սպասում էին շարունակել առաջարկների ընթերցումը:

-6.-Դպրոցի խոհանոցային սպասարկումները ուտեստեղէնները թանկ են վաճառում:

-Լա՛ւ, եթէ թանկ է, դուք յանձն առէք բուֆէն, վստահ կը վնասուէք եւ կէս ճամբին կը հրաժարուէք, ամէն ինչ թանկ է մեր օրերում:

-7.- Մեր ազգային բոլոր տօները չեն կատարւում:

Ընկալ մտածմունքի մէջ, թէ այս առաջարկը ինչո՞ւ է ընդգրկուել, քանի որ այդպէս թերացում չի եղել, սթափուելով պատասխանեցի.

-Ուրախ եմ, որ նախանձախնդիր էք մեր տօների նկատմամբ, սակայն այն ինչ որ առաջնորդարանի կողմից շրջաբերական է տրուել, տօնւում եւ դպրոցը արձակւում է:

-8.-Իսկ եթէ մեր դասադուլ արած աշակերտներից որեւէ մէկը դպրոցից դուրս հանուի, բոլորս խստօրէն դուրս կը գանք տեսչութեան դէմ, միակ ճանապարհը, որ վերջ կը տայ դասադուլին մեր ուզածների իրագործումն է: Գրութեան վերջում հրաւիրւում է աշակերտութիւնը միակամ եւ վճռական լինել:

Այդ մի խումբ աշակերտները նկատելով իմ բացատրութիւնները ոչ գոհացուցիչ՝ միասնական կանչերով ինձ որակեցին.

-Սազէշքա՞ր, սազէշքա՞ր (համակերպող):

Այդ առաջարկներից մէկի հետ ես համաձայն կիսում էի նրանց հետ դասագրքերին կապուող, որոնք չէին համապատասխանում աշակերտութեան մակարդակին բարդ եւ ժամանակավրէպ լինելով: Այո՛, պէտք է ուշադիր նրբաթափանց մօտեցում ունենալ դասագիրք պատրաստելիս՝ հոգու եւ մտքի զարգացումներին զուգահեռ նկատի առնել ազգային արժէքների ճիշտ ու շիտակ ուսուցման պահանջը:

Բաժանւում եմ դասադուլ խմբակից եւ վերադառնում եմ տեսչարան:

Դասադուլը ղեկավարւում էր դրսից:

Դասադուլը դադարեց:

Տեսչութիւնը մնաց անփոփոխ:

Ուսումնական տարին շարունակուեց:

Հետագայ տարիներում փոփոխութիւններ կատարուեցին՝ ոչ հայ տնօրէններ նշանակուեցին, դպրոցը դարձաւ միայն օրիորդաց (աղջկանց), երկսեռ դրուածքը արգելուեց երկրի տարածքում, հայոց լեզուի դասաժամերը նուազեցին, հետագայում որոշ չափով վերատեսութեան արժանացաւ շնորհիւ Առաջնորդարանի հետեւողական աշխատանքների:

## ՀԱՅԵՐԷՆԻ ԽԼԱՑ(ՈՒ)ՈՂ ԱԿԱՆՋԸ

*Շարունակուած էջ 17-էն*

փնտռէք. աշխարհի լատինատառ ոչ մի բառարանում այդպիսի բառեր չէք գտնի: Ֆրանսերէն եւ իտալերէն այդ բառերի ճիշտ ձեւն է Vernissage եւ Ciao, սակայն անգրագէտ տաքսիատէրը գրել է այնպէս, ինչպէս լսում է եւ որքան գիտի, քաղաքապետարանի, թաղապետարանի կամ չգիտեմ՝ ո՛ր ջհաննամի առաւել անգրագէտ եւ անպատասխանատու պաշտօնեան էլ, պահանջուած գումարն ստանալուց յետոյ, կնիքով վաւերացրել է տխմարութեան այս եւ նման մշտաներկայ բազմաթիւ վկայութիւնները:

Աւելի քան 160 տարի ապրեցինք ռուսական պետականութեան, մշակոյթի եւ լեզուի զօրաւոր ազդեցութեան ներքոյ: Այդ տարիներն այսօր զանազան վարձու թէ ձրի ճամարտակողներն անուանում են ստրկութեան, ազգային մշակոյթի եւ ինքնութեան աղաւաղման ժամանակաշրջան: Մենք ճիշտ հակառակն ենք կարծում, քանի որ հենց այդ տարիներին հայ մշակոյթն ու գիտութիւնն աննախադէպ վերելք ապրեցին, հայոց լեզուն էլ հասաւ բացառիկ մի կատարելութեան՝ շնորհիւ ռուսական գիմնազիաներ աւարտած (ընդգծում ենք այս հանգամանքը) Վահան Տէրեանի եւ Եղիշէ Չարենցի: Ուստի պիտի ասենք, որ այդ եւս՝ տարիներին», Խորհրդային Հայաստանի ամբողջ տարածքում չէիր գտնի հասարակական սննդի որեւէ օբիեկտ, որի ցուցափեղկին գրուած լինէր «ԱԲԵԴ»: Այդ բնագաւառի աշխատողներից շատերը, ճիշտ է, չէին փայլում բարեխղճութեամբ, բայց ազգային արժանապատուութիւն ունէին, գոնէ նուազագոյն մակարդակով: Այսօր ո՛չ մէկն ունեն, ո՛չ միւսը:3 ծաշարանատէրերը մի կողմ. այսօրուայ համատարած բարոյալքման պայմաններում, հաւանաբար, շատ կը լինի նրանցից ազգային բարձր գիտակցութիւն պահանջել, բայց հայկական հեռուստաեթերից կարող ենք եւ պարտաւոր ենք պահանջել: Գոնէ մէկ հարցում: Ի սէր Աստծոյ, բաւական է աղաւաղել մեսրոպեան այբուբենը: Հայկական տառերն անուններ ունեն: Թուարկելիս մի՛ ասեք «ա», «բը», «գը»..., այլ Այբ, Բեն, Գիմ...

Բառացիօրէն մի քանի տարում վարժեցրին արտասանել «էյ», «բի», «սի», երբ տարրական էթիկան պահանջում է արտասանել «ա», «բե», «ցե», ինչպէս լատիներէնում է եւ ինչպէս արտասանում էինք մենք մինչեւ ինքնակամ ստրկացումը «անգլոամերիկեան» լեզուաէնթամշակոյթին: *** Բայց հայերէնին այսօր սպառնում է ոչ միայն անգլերէնը, այլեւ... հայերէնը: Աւելի ճիշտ՝ հայերէնից ածանցուած աղաւաղումներն ու սխալները: Պատմութիւնը ցոյց է տալիս, որ լեզուն անմիջապէս արտացոլում է քաղաքական-հասարակական մեծ թէ փոքր ցնցումները: Անկախութեանը յաջորդած տարիները բացառութիւն չդարձան մեր լեզուի համար: Բառարաններից հանուեցին բառեր, ստեղծուեցին նորերը, գործածութիւնից դուրս եկան հները: Օրինակ՝ «խանութ» կամ «մթերային» այլեւս չես հանդիպի, նրանց փոխարինել են «վաճառասրահը», անգլերէն «մարկետ»-ը կամ «ֆուդ»-ը: Որքան այլանդակւում են բարքերը, այնքան նրբանում են բառերը. «պոռնիկ»-ը եւ «բոզ»-ը, լիովին հիմնաւորուած, կենցաղից քշեցին քաղաքականութիւն, տեղը զիջելով «մարմնավաճառ»-ին, երբեմն էլ ռուսերէնից փոխառնուած «պուտանկա»-ին, որն, ի դէպ, նոյն «պոռնիկ»-ն է:

(Տարուանկեր)

## «ՕՐԻՆԱԿԵԼԻ՞» ԳՐՈՂՆԵՐ

*Շարունակուած էջ 15-էն*

աշխարհը ոլորտ մըն էր գնահատանքի եւ հոգածութեան արժանի, իսկ հիմա՝ ամէն ինչի չափանիշը նիւթն է ու քսակը. գրող Նորայր Ատալեանի բնութագրումով՝ «հոգեպաշտ էինք ու դարձանք նիւթապաշտ»:

Իսկ ամէնացաւալին, նօսրացած է թիւը գրող-մտաւորականներու. անշուշտ, ամէն գրող մտաւորական չէ, իսկ մտաւորական ըլլալու համար գրող ըլլալը հրամայական չէ: Մտաւորականը իր նիստ ու կացով, կենցաղուվարքի առաքինութեամբ, լրջութեամբ եւ ծանրախոհութեամբ կը տարբերի բոլորէն: Երբեմն իր անձայն եւ խոհուն ներկայութեամբ շուք ու յարգանք կը պարտադրէ: Մտաւորականին խօսքը պիտի ըլլայ կշռադատուած, տեղին ու դիպուկ. նոյնիսկ՝ ձայնն ու առոգանութիւնը՝ հրահանգիչ: Հեռուստացոյցով տեսած եմ գրողներ, որոնք բնականոն ու զուսպ արտայայտուիլ անգամ չեն գիտեր. չեն մշակած իրենց խօսելաոճը. ամօթ զգացած եմ եւ զարմանք ապրած եմ լսելով գրողներ Վիոլեթ Գրիգորեանի ու Մարինէ Պետրոսեանի գռեհկաբանութիւնն ու պոռպռոցը հոգեւորականի մը դիմաց. կամ՝ ի՜նչ զաւեշտալի թատերական շարժուձեւերով կը գրուցէ գրող Արտեմ Յարութիւնեան, որ մարդ կը տարակուսի, որ ան քոմիք դերասա՞ն է թէ՞ մտաւորական:

Իրօք, մի գուցէ շատ են գրողները, սակայն պակսած են մտաւորակա՜ն-գրողները. Յ. Թումանեանի եւ Վ. Տէրեանի հոգեհարազատ շառաւիղները, երբեմնի ծանրաշուք գրողները, դասագիրքերէն մեզի տպաւորած օրինակելի՛ եւ լուսամիտ գրագէտները:

Անդին՝ Հայաստանի Գրողներու Միութեան անդամաշարքին մէջ կը վխտան այնպիսի՜ «օրինակելի՜» գրողներ, որոնց համար ափսոսա՛լ է պէտք: Այնպէս չէ՞:

## ՀԱՆՃԱՐԵՂ ԸՄԲՈՍՏԸ

*Շարունակուած էջ 15-էն*

Այնքան ատեն, որ աշխարհի վրայ գոյութիւն ունի վայրենին ու բարբարոսը՝ յանուն մեծ ազատութեան պայքարի առաջամարտիկներու շարքին մէջ պիտի փողփողայ այն դրօշը, որուն վրայ դրոշմուած պիտի ըլլայ ծործ Պայրըն անունը:

Ցաւօք, անոնք, որոնք քաջածանօթ չեն հանճարեղ ըմբոստի բանաստեղծական աշխարհին՝ առ այսօր զինք իր ժամանակներու սուտ ազնուականներու նախանձոտ բարբաջանքներէն ելլելով կը դատեն, ուր մեծ բանաստեղծը կը ներկայանայ որպէս «կանանց սրտակեր» կամ «Ափոլոնի արտաքինով հրէշ» որակումներով: Եւ ըսել, որ այս ամբողջը միայն այն պատճառով, որ այդ հանճարեղ հսկան չէր կրնար տեղաւորուիլ չար թզուկներու աշխարհին մէջ:

Մինչդեռ անոր յիրաւի ազնուական կուրծքին տակ զգայուն սիրտ մը կը տրոփէր, եւ կը տրոփէր իր հայրենիքին համար: Այն հայրենիքին, որմէ հեռանալու ցաւը ան իր վիրաւոր հոգիին մէջ կրեց հպարտ ու անմռունչ, այնպէս՝ ինչպէս վայել է միայն ընտ- րեալներուն...

Իմ մեղքն, իրաւ, ինձ խորտակեց, սակայն մի՞թէ այլ զէնք չկար.

Եւ այն ձեռքը, որ ինձ զգուեց,

Նա՞ պէտք է այս հարուածը տար: Մնաս բարեաւ: Այսպէս կտրած

Իմ հարազատ կապերն ամէն, Մերժուած, մենակ, սիրտս կոտրած,

Էլ ի՜նչ... մա՛հ է ինձ հարկաւոր...:

HayastanInfo.net

«ՔԱՋ ՆԱԶԱՐ»
ՌԱԴԻՈ ԺԱՄ
ԱՄԷՆ ԿԻՐԱԿԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-ԷՆ 12:30
ԿԼԷՆՏԷՅԼԻ 380-ՐԴ ԿԱՅԱՆԷՆ

16th International Armenia Fund

# Telethon 2013

**NOVEMBER 28 Thanksgiving Day**

## Դէպի Արցախ

## En Route Artsakh

Vardenis-Martakert Highway, strategically linking Artsakh to Armenia from the north has a critical importance for both countries. It is the missing link to fully integrate Armenia's and Artsakh's highway systems and connect Artsakh to Armenia's and subsequently, Europe's railway system. The economic development spurred by the highway has a potential to double Artsakh's GDP by 2020. The highway seriously stimulates creation of jobs in agriculture, manufacturing, tourism and trade.

Վարդենիս-Մարտակերտ ռազմավարական մայրուղին, որը կկապի Արցախը Հայաստանին հյուսիսից, ունի գերկարեւոր նշանակություն թե՛ Հայաստանի եւ թե՛ Արցախի համար: Դա շղթայի այն պակասող օղակն է, որը իրար կմիացնի Հայաստանի եւ Արցախի մայրուղիները ամբողջական դարձնելով բեռնատեղափոխման համակարգը: Ավելին, Վարդենիս-Մարտակերտ մայրուղու միջոցով Արցախը կկապվի Հայաստանի եւ, հետեւաբար, Եվրոպայի երկաթուղիներին: Մայրուղին վիթխարի մի թափ կհաղորդի Արցախի գյուղատնտեսությանը, թուրիզմին եւ առեւտրին եւ կստեղծի բազում նոր աշխատատեղեր այդ ոլորտներում:




**VARDENIS-MARTAKERT** Length 72 miles

Villages along the road 30

Road bridges 16

Construction Warranty 5 years

ArmeniaFund

**Վարդենիս-Մարտակերտ**
Ռազմավարական ճանապարհ
116 կմ եւ $30 միլիոն ԱՄՆ դոլար

**1** Concrete (on the inclines) **16"**

**2** Gravel **6.3"**

**3** Coarse **2.4"**

**4** Fine Asphalt **2"**



Since the road has to sustain loads of up to 60 tons, concrete footing will be put in the ground on the slopes to make sure the road doesn't slide.

Քանզի ճանապարհով անցնեռ լու են մինչեւ -օ տոննա քաշ ունեցող մեքենաներ, թեքություն ունեցող հատվածներում տեղադրվելու է բետոնի հիմք, որպեսզի ճանապարհը չսահի ներքեւ:

Water is the worst enemy of the road as it washes out its foundation. Drainage systems will be installed to prevent water from getting under the road.

Ջուրը անցնելով ասֆալտի տակ, քանդում է ճանապարհի հիմքը: Տեղադրվելու է ջրահեռացման համակարգ, որը անձրեւաջրերն ու ձնհալի ջուրը մեկուսացնելու են ճանապարհից:

The highway passes through a mountain range. Protection walls will be installed to prevent damage from falling rocks.

Ճանապարհը անցնում է բարձր լեռնային գոտիներով, տեղ-տեղ նաեւ ժայռերի արանքով: Ժայռերից պոկված քարերից մեքենաները պաշտպանելու համար կառուցվելու են պատնեշներ:

Guardrails prevent cars from falling into the gorge in case the driver loses control of the car.

Եթե վարորդը կորցնի մեքենայի կառավարելիությունը, երկաթյա ճաղաշարքը կպաշտպանի մեքենան ձորն ընկնելուց:

**Call:1-800-888-8897** **Visit & Donate: www.armeniafund.org**